№ 178 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 15 ՕԳՈՍՏՈՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 15 ՕԳՈՍՏՈՍԻ № 178

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ.

Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ

սրանով յայտարարում է, որ Ֆինանսների Մինիստրի Թոյլտուութեամբ և Բանկի բաժնետէրերի ընդհանուր ժողովի որոշմամբ, այս տարվայ օգոստոսի 16-ին տեղի կունենայ Բանկի բաժանմունքի բացումը

ԳԱՆՁԱԿՈՒՄ,

ուր կը կատարվեն Բանկի կանոնադրութեամբ թոյլատրված օպերացիաները:
(տռ.) 589. 2—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
(Միխայլովսկի պր. № 138)

Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից: Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 1-ին:
(Կ.) տռ. 583. 4—2

ՊՐՈԳԻՄՆԱԶԻՈՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Պետական արական պրոգիմնազիաների ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ.

Միասեռ ուսուցում տղաների և աղջիկների: Այս տարի բացվում է Երկրորդ դասարանը: Վերաքննութիւնները սկսվում են օգոստոսի 27-ից, ընդունելութեան քննութիւնները՝ այբուբենական, ստորին և բարձր պատրաստականները, I և II դասարանները մտնելու համար՝ օգոստոսի 28-ից: Խնդիրները՝ ծննդեան և ծաղկի վկայականների հետ ընդունվում են օգոստոսի 22-ից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը:
Սօլոլակ, Սերգիեվսկայա փողոց, սեփական տուն, № 20. (տռ.) 559. 7—3

ԲԱԳՎԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ երկու ուսուցիչ

բնագիտութեան և երգեցողութեան, իւրաքանչիւրը շաբաթական 16 դասով: Դասավարձն է 60 ռուբլի:

Ցանկացողները իրանց կրթութեան, անցեալ մանկավարժական գործունէութեան մասին համառօտ տեղեկութիւններով թող բարեհաճեն դիմել մինչև օգոստոսի 20-ը հետևեալ հասցէով. Баку, Попечительству Бакинскихъ армянскихъ церк.-приходскихъ школъ. Гимназическая ул. (օ.մ.) տռ. 581. 3—2

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Լոյս տեսաւ և վաճառվում է
Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆԻ կազմած
„ՄՇԱԿԻ" ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ (1872–1912)

Հանդերձ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի և Հ. Առաքելեանի պատկերներով:
Գիրքը բաղկացած է 132 էջից, տպված է ամենալաւ թղթի վրա և պարունակում է իր մէջ «Մշակի» 40 տարվայ համառօտ պատմութիւնը, բոլոր խոշոր երևոյթների, բելետրիստ. երկերի, նշանաւոր յօդուածների և այդ ժամանակամիջոցում «Մշակի» ունեցած աշխատակիցների և թղթակիցների անունների յիշատակութիւնը:
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում:
«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում:
ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ:
(տռ.) 0—19

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Լոյս տեսաւ և վաճառվում է
„ՄՇԱԿ" ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ
(«Մշակի» 40-ամեայ յօբելեանի առիթով)
I հատոր

Այդ հատորի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թւականը «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և մասնաւորապէս հայ կնոջ առաջխաղացման գործին: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիչ պատկերով:
Գինը ՄԷԿ ռուբլի:
Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում:
«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում:
ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ:
(տռ.) 0—22

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գօլ. պր. 21, տուն Առևտրական Ընկ., տէլէֆօն № 355.
Պահեստումս կան մեծ քանակութեամբ բոլոր պաստառներ ամենավերջին ոճով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր րուլօն: Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(Ե.ու.) տռ. 154. 50—45

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մաալլահարճիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կոպ.)
Այս գրքի վաճառումից գոյանալիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին:
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak"

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11, 12 և 13 օգոստոսի

Պետերբուրգ.— Առաւօտեան ժամը 3-ին մեռաւ «Нов. Вр.» լրագրի հրատարակիչ Սուվորինը:

—

Մոսկվա.—Փակվեց հակաալկօհօլական համագումարը, որին մասնակցում էին 470 հոգի եկւոր և 240 հոգի էլ Մոսկվայի անդամներից:

—

Կիսլովոդսկ.— Գիշերը Կիսլովոդսկի շրջակայքում «Замокъ коварства и любви» կոչված տեղում յարձակումն են գործել մի ուսանողի և կնոջ վրա: Գնդակահարութեան միջոցին պատահաբար սպանվել է տեղական հրդեհաշէջ խմբի կառավարիչ Սավիցկին: Ուսանողը և կինը վիրաւորված են: Կարծում են, որ դէպքը սիրային աստառ ունի:

—

Սըզրան.—Կազանի երկաթուղագծի Բուգայեվկի և Գոլիցինի միջև ապրանքատար գնացքի խորտակումն է տեղի ունեցել: Վառարանի կրակից առաջացել է հրդեհ, որից 3 ժամվայ չափ պայթվել են վագօններով ուղարկվող ռազմամթերքները: Ջարդ ու փշուր են եղել 15 վագօններ, վիրաւորվել են 14 հոգի:

—

Սևաստոպօլ.—Ցորդ անձրևը հեղեղել է քաղաքի ստորին մասերը: Կենտրօնական մասի փողոցները ծածկված են տիղմով և քարերով: Շրջակայ ազգաբնակութեանը խոշոր վնասներ է պատճառել:

—

Լոնդոն.—Ժամանեց անգլիական Թա- [illegible]

Երեկոյեան ժամը 7-ին գլխաւոր հեռագրատան չորրորդ յարկում հրդեհ առաջացաւ, արագութեամբ բռնկելով հազարաւոր լարերը: Վնասները չափազանց շատ են: Հաղորդակցութիւնը մայր ցամաքի ու Ամերիկայի միջև խզված է մի քանի օրով:

—

Բուխարեստ.—Սինայում երէկ տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշկերոյթ ի պատիւ կոմս Բերխտոլդի, որը թագաւորին յանձնել է Ֆրանց-Իօսէֆ կայսրի մեծ կարևորութիւն ունեցող նամակը:

—

Լիսաբոն.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Տիմոր կղզու վրա տեղացիների ապստամբութիւնը ճնշված է: Ապստամբները կորցրել են 3000 հոգի սպանվածներ: Գերի են առնված 4000 հոգի:

—

Պեկին.—Երեկոյեան ժամը 6-ին եկաւ Սունեատսէնը և հանդիսաւոր ընդունելութիւն գտաւ իշխանութեան կողմից: Ամբոխը օվացիաներ արեց նրան:

—

Պեկին.—Գիշերը գեներալ Ցանգսուլտիի զօրքերը կողոպտել են Պեկինի մօտ գտնվող Տունցօու քաղաքը:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11, 12 և 13 օգոստոսի

Թէհրան.—Ղեկավարող շրջաններում կարծում են, որ պարսկական պատասխանը Ջուլֆա-Թաւրիզեան երկաթուղիների վերաբերմամբ, որը արտայայտված է արտաքին գործերի մինիստրի նամակում, կը գոհացնի Ռուսաստանին: Դրանով վերացվում են Պարսից ծոցի և Խօրրամաբադի միջով երկաթուղի անցկացնելու բրիտանական կօնցեսսիայի դէմ յարուցանվող բոլոր արգելքները, որի թոյլտուութիւնը Բրիտանիան ստացել էր Նասր-էդդին շահի հրովարտակով:

—

Խոյ.—Դէպի Գիլման տանող ճանապարհին Բախշալի խանի աւազակախմբի ձեռքով կողոպտվել են Սալմաստի նահանգապետի 2 ձիաւորը: Վերջիններս նահանգապետի հրամանով մարմնական պատժի են ենթարկված առանց ընդդիմութեան զէնքերը աւազակներին յանձնելու համար:

Ուրմիա.—Թիւրքական անցագրերով վերադարձան մի քանի պարսիկ յեղափոխականներ, որոնք գարնանը Ռուսաստանի դէմ ապստամբութիւն բարձրացնելու անաջող փորձերից յետոյ փախել էին Թիւրքիա:

—

Բուշիր.—Օգոստոսի 10-ին բնիկները յարձակում գործեցին Բենդէր-Աբբասի վրա, կողոպտեցին բրիտանական-հպատակներին և անյայտացան:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11, 12 և 13 օգոստոսի

Կ. Պօլիս. — Լրագիրների ասելով, կաբինէտական կրիզիսը, ի նկատի առնելով կաբինէտի մէջ տիրող տարաձայնութիւնները, անխուսափելի է:

Թօփհանէ թաղում հրդեհը լափել է 100 տուն: Կան մարդկային զոհեր:

—

Կ. Պօլիս.—Ներքին գործերի մինիստրը նշանակելը Դանիշ-բէյին և արդարադատութեան՝ Խալիլ-բէյին՝ արդէն տեղի է ունեցել, բայց և այնպէս տարաձայնութիւնները կաբինէտում շարունակվում են. ընդհանուր կրիզիսի հնարաւորութիւնը դեռ ևս չէ վերացել, թէև, «Թանինի» ասելով, Ղազի-Մուխտարը յայտնել է, որ չի թողնի մեծ վէզիրութիւնը՝ մինչև որ չը կատարի սուլթանի հրամանը՝ ազատ և անաչառ ընտրութիւններ կատարելու համար:

Նախկին պալատի տրիպօլիսական պատգամաւորը արաբական պարագլուխների և աֆրիկական նահանգները կառավարող թիւրքական օֆիցերների անունից յայտնել է վէզիրին, որ Իտալիայի հետ խաղաղութիւն կնքելու [illegible] մեր յայտարարել և շարունակել կռիւը:

—

Կ. Պօլիս.—Չեռնոգորական և աւստրիական դեսպանները տեսակցութիւն ունեցան արտաքին գործերի մինիստրի հետ: Բ. Դրան մէջ հաւատացնում են, որ այդ տեսակցութիւնից յետոյ թիւրք-չեռնոգորական թիւրիմացութիւնը հարթված է: Մալիսօրները երկու անգամ գրոհ տուին Սկիւտարի վրա, բայց յետ մղվեցին:

—

Կ. Պօլիս.—Պօստ-հեռագրական մինիստր նշանակվեց Սաբրի-բէյը, Աբդիւլ-Համիդի նախկին ֆինանսական մինիստրը: Բարձրագոյն Դուռը համաձայնութիւն կայացրեց Օսմանեան բանկի հետ մէկ ու կէս միլիօն ֆունտ նոր աւանս ստանալու համար:

—

Բէլգրադ.—Կ. Պօլսում տիրող դրութեան և քրիստոնեաների դէպի Չեռնոգորիայի սահմանը փախչելու մասին ստացված յուզիչ լուրերը ի նկատի առնելով, կառավարութեանը մօտ կանգնած մի անձ ասում է, որ անցքերը այնպիսի կերպարանք կարող են ստանալ, որ բալկանեան պետութիւնների կառավարութիւններին շատ դժուար կը լինի զսպել ժողովրդական զայրոյթը. չէ կարելի այդ բանում չը տեսնել Բերխտոլդի առաջարկութեան հետևանքները:

—

Բէլգրադ.—Սահմանագլխի վրա գտնվող Եավորից ստացված յուզիչ լուրերը Սենիցայում, Բէլոպօլում և Նօվօ-Բազարում տեղի ունեցող սերբերի կոտորածների մասին ճնշիչ տպաւորութիւն գործեցին այստեղ: Լրագիրները պահանջում են կառավարութիւնից անմիջապէս ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել ազգակիցների պաշտպանութեան համար, և հրաւէր են կարդում քաղաքացիներին գումարվել բողոքի միտինգի:

—

Բէլգրադ.—Ուսանողները ժողովրդական մասսաների մասնակցութեամբ ցոյց կազմակերպեցին՝ հայրենասիրական ճառերով պահանջելով կառավարութիւնից եռանդուն պաշտպանութիւն ցոյց տալ իրանց ցեղակիցներին. արտաքին գործերի մինիստրութեան առաջ, կշտամբելով կառավարութեանը թուլութեան մէջ, պահանջելով նոր եռանդուն հեղինակաւոր կաբինէտ կազմելու, օֆիցերական ժողովարանի առջև ի պատիւ սերբիական օֆիցերների արված ցոյցի ժամանակ թնդում էին աղաղակներ՝ «կեցցէ սերբիական զօրքը, կորչեն Թիւրքիան և առնաուտները»: Զօրքշաբթի նշանակված է ժողովրդական մեծ միտինգ.

Արժանահաւատ աղբիւրներից լսելով, կառավարութիւնը առաջարկութիւն է արել Բ. Դրան առաջ Հին-Սերբիայի խաղաղ ազգաբնակութեան դէմ սկսված հալածանքը դադարեցնելու համար:

—

Սենիցա.—Միակ քրիստոնեայ կայմակամը Կոսսովայի վիլայէթում՝ Բէրանի կայմակամ Իլիա Պոպովիչը սպանվել է թիւրքերի ձեռքով: Բէլոպօլում մուսուլմաններին զէնք բաժանելուց յետոյ, սերբերի դրութիւնը վատթարացել է: Գիւղական ժողովուրդը փախչում է քաղաք:

—

Պրիզրէն.—Կռիւը Բէրանի մօտերքում շարունակվում է: Չեռնոգորցիները թիւրքական զօրաշղթաները վերցնում են իրար ետևից:

—

Սօֆիա.—Նորերս կազմված ազատագրական պատերազմի կօմիտէտը նոյնանման գաւառական 400 կօմիտէտների և մակեդօնօ-դրինեան եղբայրների պատգամաւորական համագումարի հրաւիրեց, որտեղ խորհրդակցութիւնը մի բանաձևով, ի նկատի առնելով բօլգարների ներկայ քաղաքական վիճակը Մակեդօնիայում, պահանջ է յայտնում, որ կառավարութիւնը զէնքի կանչի զօրաբանակը և պահանջի պետութիւններից լիակատար ինքնավարութիւն Մակեդօնիայի համար շրջանային ժողովրդական ժողովներով, ժողովրդական միլիցիայով և քրիստոնեայ-գեներալ-նահանգապետով, իսկ եթէ [illegible] այս պահանջը չը բաւարարեն ազատագրական պատերազմ. Կոնգրէսի փակումից յետոյ թափօրը սգոյ դրօշակներով գնաց դէպի Ալէքսանդր 2-րդի արձանը և պսակ դրեց նրա վրա հետևեալ մակագրութեամբ. «Ազատարար Թագաւոր, բօլգարական ժողովուրդը շարունակում է Քո սուրբ գործը»:

—

Ֆերիզօվիչ.—Դիակօվօյից վերադառնալիս, ալբանացիները հրդեհեցին պահակատունը և կողոպտեցին տուն արձակված զինւորներին:

—

Ուրմիա.—Ռուսական հիւպատոսը բողոքեց և պահանջեց պատժել թիւրքական ասկէրներին և թիւրքական հիւպատոսարանի կաւասներին, որոնք փողոցում ծեծել էին ռուսական հիւպատոսարանի տեղացի թարգմանին: Թիւրքական հիւպատոսարանի պահակախումբը աւելացված է 70 ասկէրներով:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պօլիս, 4 օգոստոս

Շաբթուան կարևոր իրողութիւնն է դահլիճի մէջ առաջ եկած անհամաձայնութիւնը: Դահլիճին ամենէն ձեռնհաս, ամենէն յարգելի անդամներէն ներքին գործերու մինիստր Զիա փաշա հրաժարեցաւ, վասն զի չէին ազատ թողուր զինքը գաւառի կուսակալներ անուանելու գործին մէջ: Հակառակ գրուած բոլոր աշխատութեանց՝ Զիա փաշա պնդեց իր հրաժարականին վրայ և վերջնապէս հարկ եղաւ ուրիշ մը անուանել իրեն յաջորդ:

Դահլիճին մէջ առաջ եկած անհամաձայնութեան պատճառը կըսուի թէ արտաքին քաղաքականութեան մէջ համաձայն չըլլալն է:

Ղազի Մուխտար փաշա և Հիւսէին Հիլմի փաշա անգլիական քաղաքականութեան այնքան համակիր չեն, ուստի աւելի գերմանասէր են:

Գերմանիա՝ Թիւրքիոյ կուսակցութիւններէն Իթթիհադը որդեգրած է, վասն զի անիկա իր շահերուն կը ծառայէ, ինչպէս տեսնուեցաւ Հակկը փաշայի դահլիճին պաշտօնավարութեան բովանդակ ընթացքին:

Անգլիա՝ ընդհակառակը՝ շատ յայտնապէս օժանդակեց և կօժանդակէ Իթիլաֆին, ուրով կը տեսնուի թէ Թիւրքիոյ արտաքին քաղաքականութեան համար երկու իրարու հակառակ կուսակցութիւնները ունին իրարու գլխովին հակառակ տեսակէտներ:

Հիմա որ ընտրական պայքար մը պիտի

ակի, երկու օտար կառավարութիւններն իրարապէս կը խառնուէին պայքարին իրենց ձեռնտու կուսակցութիւններուն յաջողութեան փափագով։

Հետեւաբար երկու կառավարութեանց դեսպանները խառնուած են գործի և բոլոր ուժովին կը պայքարին։

Դահլիճին անդամները կուզեն իրենց ազդեցութեան տակ առնել, իրենց նախասիրած կուսակցութեան յաջողութեան համար։

Քեամիլ փաշա, Զիա փաշա, Նորատունկեան էֆ. և այլք կը պատկանին անգլիասէրներու խումբին և, ընտրութիւններու մէջ կուսակից ըլլալով կատարեալ անկողմնակալներուն, կուզեն, որ գաւառի կուսակալութեան մէջ չմնան իթթիհադական կասկածելի անձեր, որոնք ընտրութիւններու մէջ զեղծումներ ընեն և Իթթիհադին յաջողութիւնը ապահովեն։

Ասոր համար՝ Զիա փաշա գրեթէ որոշած էր բոլոր կուսակալները փոխել և անկողմնակալ անձեր դնել։

Գերման դեսպանն այս որոշման Իթթիհադին նկատմամբ որքան աղէտաբեր ըլլալը հասկնալով անմիջապէս դահլիճին մէջ գտնուող իր բարեկամները թելադրած է դէմ կենալու այս կարգադրութեան, և ասկէ առաջ եկած է անհամաձայնութիւնը։

Այս տեղեկութիւնները տեղական մամուլին մէջ չհրատարակուեցան, միայն ըսուեցաւ, թէ Զիա փաշա գործելու ազատութիւն կը պահանջէ և անոր համար կը հրաժարի, իսկ պաշտօնական տեղեկատուութեան մէջ անձնական տկարութիւնը պատճառ ցոյց տրուած էր։

Իրապէս պատճառը լոկ արտաքին քաղաքականութիւնն էր, և ատիկա գերմանասէր և անգլիասէր հոսանքներու բախումն էր։

Ներկայ մինիստրները ըլլալով ամենէն ձեռնհասները՝ երկրին տագնապին վերջ տալու, շատ ցաւալի է, եթէ անհամաձայնութեան մը հետեւանքով երկպառակին։

Հաւանօրէն այն պարագային Քեամիլ փաշա պիտի ստանձնէ վարչապետութիւնը և պիտի կազմէ զուտ անգլիասէր դահլիճ մը։

Սակայն առ այժմ միայն Ներքին գործոց մինիստրին հրաժարականով տագնապը վերջացաւ և դահլիճը իր գործը կը շարունակէ բաւական վճռական քայլեր առնելով։

Այս շաբթու հրատարակուեցաւ վարչապետական շրջաբերականը, որով նոր ընտրութեանց պատրաստուելու կը հրաւիրէր գաւառական իշխանութիւնները։

Այս շրջաբերականին մէջ դահլիճը նախորդ ընտրութեանց մէջ կատարուած ապօրինութիւնները կը հաստատէր և նախորդ դահլիճը յայտնապէս կամբաստանէր «իբր ապօրէն հրահանգներ» տալուն։

Մինչև վերջին օրերս Իթթիհադին ամենէն կատաղի անդամները ներկայ կառավարութիւնը իբր ապօրէն և բռնակալ չէին ու[illegible] խորհրդարանը արձակուրդի մէջ նկատելով կուզէին տապալել ներկայ կառավարութիւնը և բանալ փակուած խորհրդարանը և իրենք ստանձնել կառավարութիւնը։

Հիմա իրենց մէջ երկպառակութիւն առաջ եկած է և մեծագոյն մասը կընդունի կատարուած բոլոր գործողութեանց օրինաւորութիւնը և, իբր քաղաքական կուսակցութիւն մը, ընտրութեանց մասնակցելու յանձնառու կըլլայ։

Սակայն փոքրամասնութեան մնացած յամառ հատուածը տակաւին կը ջանայ ներկայ կառավարութիւնը տապալել։

«Ազատութեան հերոս» հռչակեալ ալբանացի Նիազի բէյ, կ'ըսեն, թէ իրեն եղած խոստումները չլացած, անմտօրէն լեռ բարձրացած է արդի կառավարութեան դէմ ապստամբելով։ Հաւանական է, որ այս անխորհուրդ ձեռնարկը ոեւէ հետեւանք չունենայ, քանի որ այդ հերոսին հետեւող չկայ հիմա, ինչպէս երբեմն 1908-ին պատահած էր։

Այս կերպով իթթիհադականներու ջանքերը, բնական է, պիտի ձախողին և կառավարութիւնը պիտի ընկճէ ամեն ապստամբական փորձ։ Շաւալ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետական Դումայի ընտրութիւնները

Քաղաքային ինքնավարութիւնն արդէն եօթերորդ օրն է, ինչ ընտրողների ցուցակները կազմել և ի ցոյց է դրել հասարակութեան ստուգութեան համար, թէ արդեօք իւրաքանչիւր իրաւունք ունեցող ընտրող մտցված է այդ ցուցակների մէջ թէ ոչ։

Համաձայն օրէնքի՝ այն ընտրողները, որոնք ունեն կամ սեփական տուն, կամ վճարում են առեւտրական գիլդի տուրք կամ բնակարանային տուրք և կամ անձնական եկամուտքի տուրք, այդպիսիների ցուցակները կազմում են այն հաստատութիւնները, որոնք ստանում են այդ տուրքերը և հսկում դրանց վրայ, միայն թէ այդ ցուցակների մէջ եթէ մոռացմամբ կամ սխալմամբ չեն մտած վերեւում յիշված կատեգորիայի ընտրողները, նրանք իրաւունք ունեն ցուցակը կազմելուց յետոյ երկու շաբաթվայ ընթացքում ստուգել և սխալների մասին բողոքել գաւառական ընտրողական մասնաժողովին և բաց թողած անունը մտցնել տալ նորից ցուցակների մէջ։

Եթէ այդ յիշված երկու շաբաթվայ ընթացքում [illegible] ամենքը ընտրողները չեն վերականգնի իրանց իրաւունքները, ապա այդպիսիք ներկայ ընտրութիւններին վերջնականապէս կորցնում են ընտրելու թանգագին իրաւունքը։

Քաղաքային ինքնավարութեան կազմած և ի ցոյց դրած ցուցակների ստուգութեան ժամանակամիջոցը լրանում է օգոստոսի 22-ին, ուրեմն ժամանակը շատ կարճ է և ամեն մի ընտրող պէտք է շտապի օր առաջ տեսնելու, թէ արդեօք իրան մոռացութեան հօ չեն տուել։

Ընտրողների այն կատեգորիան, որ կազմում է ընտրողների մեծագոյն մասը, այսինքն էժան բնակարաններ ունեցողները և բնակարանային վարձ չը տուողները արդէն կորցրին իրանց իրաւունքները ձայն տալու, և ցաւելով պիտի արձանագրենք, որ ներկայ ընտրութիւններին այդպիսի ընտրողները միանգամայն հիասթափեցրին իրանց անտարբերութեամբ դէպի ընտրութիւնները, ապա ուրեմն քաղաքացիական իրաւունքների ըմբռնողութեան և հասունութեան վկայականի անարժան հանդիսացան...

Այժմ քննութեան հերթը գալիս է աւելի պատրաստված և հասունացած ընտրողների հետեւեալ մասին. տեսնենք թէ նրանք ինչ վերաբերմունք ցոյց կը տան դէպի իրանց քաղաքացիական իրաւունքները։

Մենք անձամբ մեզ վրայ հաւաստիացանք, որ սխալներ կան կազմված ցուցակների մէջ և որ հարկաւոր է անպատճառ ստուգել. թող մեր անտարբերութիւնը չառաջանայ այն վստահութիւնից, թէ հաստատութիւնները չեն սխալվի. ընդհակառակը գործը կատարվել է այնքան շտապ և հապճեպ կերպով, որ սխալները անխուսափելի և շատ հասկանալի են։

Ուրեմն մի անգամ եւս հրաւիրում ենք մեր հասարակութիւնը վերահաս լինել իր քաղաքացիական իրաւունքները իրագործելուն և անպատճառ մանել քաղաքային ինքնավարութիւն՝ ստուգելու իրանց անունները ցուցակ մտցնելու. միայն եթէ չեն մտցրած անպատճառ աշխատել մտցնել տալու։

Այս բոլոր գործը ընդամենը հինգ րոպէի բան է և աւելորդ ժամանակ չի խլի և ձեռնականութիւններ կատարելու կարիք չը կայ։

Քաղաքացիներ, կատարեցէք ձեր քաղաքացիական պարտքը։ Շիրին

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Թիֆլիսում կայանալիք համագումարի ծրագրի կէտերը հետեւեալներն են՝

1) Ժամանակակից բամբակագործութեան գլխաւոր պակասութիւնները։

2) Բամբակագործութեան ազդեցութիւնը [illegible] և վաճառականի վրայ։

3) Զանազան շրջաններում նկատվող բամբակի բերքի նուազման պատճառները և միջոցները այդ երեւոյթի առաջն առնելու։

4) Ինչին պէտք է գերադասութիւն տալ՝ արդեօք ոռոգվող հողերի տարածութեան ընդարձակմանը և ոռոգման գործի բարւոքմանը թէ բամբակագործութեան մշակութեանը և խնամատարութեանը։

5) Միջոցներ՝ ընդարձակելու և զարգացնելու բամբակագործութիւնը անջրդի շրջաններում։

6) Ազգաբնակութեան ապահովութիւնը բամբակի լաւ սերմացուով։

7) Բամբակի փորձադաշտերի և ցուցադաշտերի և հրահանգչական գործունէութեան նշանակութիւնը բարւոքելու և զարգացնելու բամբակագործութիւնը և դնելու այդ գործը երկրի ժամանակակից կարիքների համապատասխան կերպով։

8) Դասընթացքների, ընթերցումների, զրոյցների, ցուցահանդէսների նշանակութիւնը և բամբակագործութեան վերաբերեալ հանրամատչելի բրօշիւրների տարածումը բամբակագործութեան զարգացման համար։

9) Առանձին միջոցներ բամբակագործներին խրախուսելու բամբակի մշակութիւնը բարւոքելու համար։

10) Բամբակագործութեան շրջանների ապահովելը բանւոր ձեռքերով։

11) Ինչպիսի անցանկալի երեւոյթներ են նկատվում բամբակի վաճառահանութեան մէջ արդիւնաբերութեան վայրերում և ինչ միջոցներով կարելի է բարեկարգել առեւտուրը։

12) Բամբակ մաքրող գործարանների և ձիթհանքերի գործունէութեան այնպիսի ընթացք տալը, որ երկրի բամբակագործութիւնը նպաստաւոր զարգացում ստանայ։

13) Ինչ միջոցներով կարելի է բաւարարել բամբակագործների կարիքը յարմար և էժանագին կրեդիտի վերաբերութեամբ։

14) Ինչ մասնակցութիւն կարող կը լինեն ունենալ գիւղատնտեսական և կրեդիտային ընկերակցութիւնները և բամբակագործական ֆիրմաները բամբակագործութեան բարւոքման միջոցների կազմակերպութեան իրագործութեան մէջ և հարկաւոր ծախքերի հայթայթման մէջ։

15) Ինչ միջոցներ են անհրաժեշտ բամբակագործութեան վիճակագրութեան կանոնաւոր կազմակերպութեան համար։

16) Երկաթուղային սակագները և նրանց կանոնաւորումը բամբակագործութեան կարիքներին համապատասխան։

17) Տեղական բամբակագործական կոմիտէների կամ մասնաժողովների նշանակութիւնը երկրի բամբակագործութեան զարգացման համար և նրանց հիմնադրութիւնը։

18) Մաքսեր Ռուսաստան ներմուծվող բամբակի վրա և ծրագրվող ներքին հարկերը բամբակագործութեան վրա Ռուսաստանում։

Ծրագիրը ընդարձակ է և իւրաքանչիւր ոք կարող է ընտրել նշանակված կէտերից որը և քանիսը ցանկանայ ուսումնասիրելու և նրանց վերաբերութեամբ իր կարիքները և խորհրդածութիւնները յայտնելու։

Ա. Ս. ՍՈՒՎՈՐԻՆ

«Մշակի» ընթերցողները արդէն տեղեկացան հեռագիրներից Ա. Ս. Սուվորինի մահվան մասին։ Տալիս ենք մի քանի կենսագրական տեղեկութիւններ։

Սուվորինը ծնվել է 1834 թւականին Վորոնեժի նահանգի Կորշեւ գիւղում։ Իր ուսումը ստացել է Միքայէլեան կադետների կորպուսում և ազնւականների գնդի մասնագիտական դասարաններում. Մի քանի տարի ծառայում է իբրև օֆիցեր, ապա հրաժարական է տալիս և նուիրվում է ուսուցչական գործունէութեան։

1858 թւականից սկսվում է Սուվորինի գրականական գործունէութիւնը։ Մի քանի տարի նա աշխատակցում է մի քանի հրատարակութիւնների մէջ, ուր տպագրվում են նրա թարգմանութիւնները և փոքրիկ յօդուածները։ Առանձին ժողովրդականութիւն է ստանում նրա «Գաբրիալի» պատմուածքը, որ տպագրվում է 1861 թ.։

Սուվորինը տեղափոխվում է նախ Մոսկվա, և ապա, 1863 թւականին, Պետերբուրգ, որտեղ աշխատակցում է „Русскій Инвалидъ" և „С.-Пет. Вѣд." թերթերին։

Վերջին թերթը այն ժամանակվայ չափաւոր-ազատամիտ հոսանքների ամենանշանաւոր արտայայտիչն էր։ 1866 թւականին նա հրատարակում է իր յօդուածները առանձին գրքով, որ պատճառ է դառնում Սուվորինի դէմ դատ յարուցանելուն։ Սուվորինը դատապարտվում է 3 շաբաթվայ բանտարկութեան, իսկ գիրքը այրւում են։

Մանաւանդ մեծ ժողովրդականութիւն է ստանում Ա. Ս. Սուվորինը իր տաղանդաւոր ֆէլիէտոնների շնորհիւ, որ տպագրվում էին նոյն «С.-Пет. Вѣд.» լրագրի մէջ և որտեղ նա յարձակվում է այն ժամանակվայ աջակողմեան և րէակցիոն ուղղութեան ներկայացուցիչների վրա, որպիսին էին Կատկով, Սկարեատին, եւլն. Մեշչերսկիյ։

Սուվորինը քարոզում էր այն, որ ռուսները չը պէտք է խուսափեն եւրոպական ազգերին մօտենալուց, այլ ընդհակառակը պէտք է [illegible]տուրական դաշն հաստատեն Եւրոպայի հետ։

Այդ ժամանակը Սուվորինի գործունէութեան ամենափառ շրջանն էր։ Նրա յօդուածները յափշտակութեամբ էին կարդացվում, գրքերը զարմանալի արագութեամբ սպառվում։

Բացի «С.-Пет. Вѣд.» լրագրից, Սուվորինը աշխատակցում էր մի քանի ուրիշ թերթերի և ամսագրերի։ 1867 թւականին Սուվորինը Վ. Լիխաչովի հետ միասին գնում են «Новое Время» լրագիրը։

Այդ այն ժամանակն էր, երբ սլաւոնական ազգերը ապստամբվեցին Թիւրքիայի դէմ։ «Новое Время»-ն դարձաւ սլաւոնական հարցի պաշտպաններից մէկը, բարձրացնելով իր ձայնը ի պաշտպանութիւն այդ ազգերի ազատութեան։

Այդ բանով օգտվեցին նացիոնալիստները և զարմանալի ճարպկութեամբ կարողացան իրանց ձեռքը գցել թէ «Нов. Вр.»-ն և թէ նրա հրատարակիչ Սուվորինին։

Ապշեցուցիչ է թէ ինչպէս մի քանի տարվայ ընթացքում Սուվորինը բոլորովին այլակերպվում է։ Այն Սուվորինը, որ մի ժամանակ ռուս լիբերալիզմի ամենաեռանդուն մարտիկն էր, այն Սուվորինը, որ իր տաղանդաւոր գրչով քարկոծում էր և կշտամբում նեղ նացիոնալիզմը, այժմ դառնում է հէնց այդ նեղ նացիոնալիզմի առաջնորդը։

Մանաւանդ անպատուաբեր դեր է սկսում խաղալ «Нов. Вр.»-ն 1905 և յետագայ տարիներում։ Թերթը շարունակ աշխատում է օֆիցիօզի դեր խաղալ, աշխատում է ըմբռնել կառավարութեան ընթացիկ կուրսը և գործել ըստ այնմ։ Այն ժամանակ՝ երբ կառավարութիւնը յանձին նախկին պրեմիեր-մինիստր Ստոլիպինի փորձում է մօտենալ սահմանադիր-ռամկավարներին, «Н. Вр.»-ն սկսում է այդ կուսակցութեանը իր սիմպատիաները արտայայտել։ Ստոլիպինը, մի փոքր դեկլարացիաներից յետոյ, կանգ է առնում հոկտեմբերեանների վրա. թերթը իսկոյն դառնում է հոկտեմբերեան։ Այժմ էլ նա պաշտպան է այն նացիոնալիզմի, որ ծրագրված էր Ստոլիպինի ձեռքով։

Վերջին տարիները Սուվորինը կարծես սառչում է դէպի լրագրական գործը և նուիրվում է թատրոնին, հիմնելով Պետերբուրգի Փոքր թատրոնը, դրամատիկական կուրսերը։ Սուվորինը գրել է նաև մի քանի պիէսներ, որոնցից յայտնի են «Մէդէյա» և «Տատիանա Ռեպինա»։

Բացի այդ Սուվորինը հիմնել է Ռուսաստանի լաւագոյն գրավաճառանոցը, այսպէս կոչված «Нов. Время»-ի գրավաճառանոցը։

Մանաւանդ յիշատակելի է Սուվորինի հրատարակչական գործունէութիւնը։ Սուվորինն է, որ առաջին անգամ տուել է ռուս հասարակութեան դասական գրականութիւնը ամփոփ հրատարակութեամբ։ Լ. Ք.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Աւազակները Դարաչիչագի սահմանում

Նոր-Բայազէտ, 9 օգոստոսի

Մի քանի օր առաջ մեր գաւառի Դարաչիչագի շրջանի սահմաններում աւազակներ են երեւացել, որոնք անհանգստացնում են տեղական խաղաղ ազգաբնակութեանը։ Աւազակները, որ յաճախ մեր գաւառին են մօտեցել յատկապէս ամառվայ ընթացքում, ապաստան են գտել գլխաւորապէս «Էշակմէյդան» կոչված եայլաղատեղում, ուր սար ես դուրս գալիս ամեն տարի Ղազախի կողմերից Շիխլի, Դաղքասամանի և Ղրաղ-քասամանի թուրք տարրեր, որոնց մէջ գրեթէ միշտ բուն դրած են լինում թալանութեան բնազդներով համակված աւազակաբարոյ թուրքեր, որոնք քաջութիւն համարելով աւազակութիւնը՝ սկսում են անհանգստացնել խաղաղ բնակչութեան...

Նոր-Բայազէտի գաւառապետ Ս. Ս. Ֆիլիպով ահա մի շաբաթ է, ինչ իր պահակներով հետապնդում է աւազակներին, որոնց հետքերը այս անգամ երեւացել են Դարաչիչագի արեւմտեան մասում, Արզաքենդի մօտ եղած անտառում։ Յոյս կայ, որ այդ աւազակները առանց զգալի վնասներ հասցնելու տեղական խաղաղ բնակչութեան շուտով կանհետանան մեր գաւառի սահմանից, երբ քօչւորները կը վերցնեն իրանց օբաները և կը չուեն դէպի իրանց բնակավայրը։ Ցարս

Անձրեւ եւ ձիւն Զաքաթալայի շրջանում

Զաքաթալա, 10 օգոստոսի

Ամբողջ ամիս ու կէս երաշտութիւնից մեր շրջանում բուսականութիւնը իսպառ ոչնչացաւ, ծառերի տերեւներն ու պտուղները անժամանակ չորացան, սկսեցին թափթփվել։ Անասելի շոգերի պատճառով երկու քայլ անել չէր լինում. և ահա այդ բոլորից յետոյ, 2 օր առաջ, թէ քաղաքումս և թէ շրջանում տեղաց յորդ անձրեւ, տեղ-տեղ էլ սարսափելի կարկուտ. իսկ քաղաքից ոչ հեռու սարերը ծածկվեցին ձիւնի սպիտակ սաւանով, մի բան՝ որ մեր ազգաբնակութեան համար նորութիւն է համարվում տարվայ այս ամսին։

Քաղաք եկողները պատմեցին ինձ, որ սարերը «եայլաղ» գնացողների տաւարից բաւականաչափ փչացել է կարկտից ու ձիւնից։ Մի քանի գիւղերում մօլլաները ժողովրդի գլուխ անցած՝ թափօրներ արեցին, որ երկինքը գթայ իրանց վրայ, անձրեւ ղրկէ. և երկինքը լսեց նրանց աղաչանք-պաղատանքը, անձրեւի հետ ձիւն ու կարկուտ ղրկեց վնասներ հասցնելով խեղճ ու կրակ գիւղացուն... Սեպուհ

Ոճրագործութիւն

Ղազախ, 7 օգոստոսի

Ամսիս 2-ին՝ 6—7 տարվայ օտարութիւնից վերադարձաւ տեղս Շամշադինի Վերին Կարմիր Աղբիւր գիւղացի Գրիգոր Պօղոսեանցը և ուղղակի միայնակ՝ օրը կէս-օրին ճանապարհվեց դէպի Թովուզ, որտեղից պիտի անցնէր հայրենի գիւղը, ուր անհամբեր սպասում էր նրա պառաւ մայրը։

Հետեւեալ օրը խեղճ երիտասարդի դիակը բերին Ղազախ, սրախողխող արած, այլանդակած։ Բազմաթիւ վէրքեր տալուց յետոյ՝ չարագործը չէր յագեցել իր արածով, ուստի կտրատել էր երկու ձեռքի դաստակները ու թաթերը բաժանել մարմնից։

Ամսիս 6-ին կասկածով կալանաւորված Եարալուլու գիւղացի մի թուրքի բերին Ղազախի բանտը, որի վրա գտնված վէրքը, սպանվողից ստացած, մատնել է իրան։ Լուր է պտտում, որ չարագործը խոստովանել է իր յանցանքը։ Խաչ. Խաչատրեան

Երեցփոխի ընտրութիւնը

Կօջոր, 13 օգոստոսի

Կիրակի, ամսիս 12-ին, պատարագից յետոյ տեղիս հայոց ս. Կարապետ եկեղեցում կայացաւ ծխ. ժողով՝ ընտրելու նոր երեցփոխ, կոյս Հռիփսիմէ Թայիրեանի 6-ամեայ երեցփոխական ժամանակամիջոցի լրանալու պատճառով։

Ժողովին ներկայ էին մօտ 30-ի չափ ընտրողներ։ Գործակալ Ս. աւ.-ք. Շիօյեանը ժողովը բանալով խնդրեց ընտրել նախագահ և քարտուղար։

Ժողովը նախագահութեան համար ընտրեց իրան հ. գործակալին, իսկ քարտուղար՝ Բ. Բերինեանին։ Նախագահը խնդրեց ներկայ եղող ժողովականներին՝ մի հեռագրով շնորհակալութիւն յայտնել կոյս Թայիրեանին իր արդիւնաւոր ծառայութեան համար՝ յօգուտ եկեղեցու բարեզարդութեան։ Խնդիրը յարգվեց, և հեռագիրը հ. նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ ուղարկվեց ըստ պատկանելոյն, ապա ձեռնարկվեց երեցփոխի ընտրութեան։ Թեր և դէմ կարծիքներից յետոյ միաձայն առաջարկվեց Բարսեղ Ս. Եղիազարեանի թեկնածութիւնը, որը և անցաւ՝ ընտրվելով տեղիս հայոց եկեղեցու համար երեցփոխ։ Բ. Բերինեան

Խոտի եւ արտի հունձը վերջացած

Դիլիջան, 10 օգոստոսի

Խոտը այս տարի բաւական առատ է, իսկ ցանքսերի տուած արդիւնքը միջակ պէտք է համարել։

Գարնան անսպասելի ցրտերն ու ձիւները վնասեցին թէ մշակովի և թէ վայրի ծաղկած ծառերին, որոնք ցրտահար եղան և բոլորովին բերք չը տուին։

Կաթնատնտեսութեան կուլտուրական եղանակների բացակայութեան պատճառով և կենսամթերքների թանգութեան շնորհիւ՝ թանգ են այս տարի կաթնեղէնները։ Կարագ իւղը ծախվում է 18—20 ր., պանիրը 5—6 ր., թանգ է և բուրդը, որ շատ գիւղացիներ չեն կարողանում գնել և իրանց անհրաժեշտ պէտքերին գործ ածել։

Կենսամթերքները գնալով թանգանում են և գիւղացու ապրուստը դժուարանում է։ Լ. Սահակեան

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻՑ

VI

Հաց... հաց...

Բագու, 8 օգոստոսի

Երկու շաբաթ սրանից առաջ, գիշեր ժամանակը, Սաբունչինսկայա փողոցում հրդեհ առաջացաւ Աթաբէկեանի նորակառոյց երեքյարկանի հսկայական տանը։

Ինչպէս առ հասարակ ընդունված է մեզ մօտ, հրդեհաշէջների խումբը միայն այն ժամանակ վրա հասաւ, երբ արդէն հսկայական տունը ամբողջովին բռնված էր կրակով և նրան ազատելու այլեւս ոչ մի հնար չը կար։

Փչում էր սոսկալի քամի, որը աւելի եւս օգնում էր հրդեհի ծաւալի մեծանալուն, և առաւօտեան դէմ հսկայական շինութեան միայն կմախքն էր մնացել։

Տան բնակիչների ամենամեծ տոկոսը բաղկացած էր բանւոր և արհեստաւոր դասակարգից, որոնք միայն իրանց օրվայ պարէնը հազիւ են կարողանում ճարել և, ինչպէս ասում են, քար-քաշելով, լուռ ու մունջ մի կերպ կերակրում են իրանց ընտանիքները։

Եւ յոգնած ու վաստակած երեկոյեան քուն մտնելով՝ նրանցից ի հարկէ ոչ ոք չէր կարող երեւակայել, թէ մի քանի ժամից յետոյ իր ամբողջ ունեցած խղճուկ կայքը բնութեան արհաւիրքի զոհ է դառնալու։

Գիշերվայ կէսին ծագած հրդեհը այնքան անսպասելի և սոսկալի էր, որ տան քնաթաթախ բնակչութիւնը գլուխը միանգամայն կորցրել էր և ամեն բան մոռացած՝ տարերային մի ուժեղ թափով աշխատում էր միայն իր գլուխը ազատել այդ դժոխքից՝ մոռանալով թէ տուն, թէ տեղ, թէ կայք և թէ կին ու երեխայ։

Սարսափից գլուխները կորցրած մարդիկ, մերկ ու ոտաբոբիկ, միայն մի բան էին յիշում՝ որքան կարելի է շուտ ազատել իրանց գլուխը այդ գեհենից և կրակի բոցերի զոհ չը դառնալ։ Շատերը նոյնիսկ վերին յարկի պատուհաններից էին դուրս ցատկում փողոց։

Առաւօտեան արեւի առաջին ճառագայթները լուսաւորում էին այրված, մոխիր դարձած տան շուրջը հաւաքված մերկ ու տնանկ, ամեն բան կորցրած բնակչութիւնը, որը արտասուքն աչքերին լուռ ու մունջ դիտում էր իր ունեցած-չունեցածի խղճուկ մնացորդները։

Դրութիւնը սոսկալի էր։

Հարիւրաւոր ընտանիքներ իրանց խղճուկ ունեցածներից զրկված՝ մնացել էին փողոցում, քաղցած, մերկ ու առանց կոպէկի։

Շատերը գործի չէին կարողանում գնալ, որովհետեւ հագուստ չունէին, ամեն ինչ այրվել էր, և նրանք մնացել էին այնպէս, ինչպէս որ ազատել էին գլուխները կրակի ճարակից. շատերը կորցրել էին իրանց գործիքները, առանց որոնց աշխատանքի գնալ չէին կարող, և ձեռքները ծոցներին մնացել էին փողոցում կանգնած, շրջապատված՝ իրանց քաղցած մանուկներով։

Հարկաւոր էր անմիջական օգնութիւն, հարկաւոր էին միջոցներ այդ թշուառներին անլանելի դրութիւնից ազատելու համար։

Հարկաւոր էր մի հիմնարկութիւն, մարդկանց մի խումբ, որը գործի գլուխ անցնելով՝ եռանդուն կերպով միջոցներ ձեռք առնէր թշուառներին օգնելու համար։

Բայց չէ՞ որ Բագուն ամեն բանում բացառութիւն պէտք է կազմէ։

Ոչ թշուառների ողբն ու լացը, ոչ մանուկների աղաղակները, ոչինչ, ոչինչ չը կարողացաւ շարժել մարդկանց գութը, որպէս զի նրանք օգնութեան ձեռք կարկառէին իրանց թշուառ եղբայրներին ու քոյրերին։

Բարեգործական ընկերութիւնները փակել էին իրանց դռները, հարուստները խլացրել իրանց ականջները և թշուառութեան ճիրաններում գալարվող զոհերը, ամօթից խեղդվելով, վիզները ծռած մնացել էին անլանելի դրութեան մէջ։

Նրանցից մի քանիսը ստիպված էին դռնէ-դուռ ման գալ, ձեռքները պարզել, ողորմութիւն խնդրել, իսկ մեծամասնութիւնը այդ էլ չէր կարողանում անել։

Ամօթը խեղդում էր նրանց։

Երէկվայ իր աշխատանքով ապրող մարդը ինչպէս կարող էր այսօր յանկարծ ձեռք պարզել և ողորմութիւն խնդրել։

Եւ լուռ ու մունջ նա մնացել էր իր դժոխային դրութեան մէջ։

Իսկ մարդիկ քար էին դարձել։

Լուռ էր նաև մեր քաղաքային ինքնավարութիւնը։

Միլիոնների բիւջէ ունեցող մեր քաղաքավարչութիւնը, որը ապրում, գոյութեան ունի ազգաբնակութեան գրպանների կօպէկներով, որի արած միլիօնների փոխառութեան տոկոսները ազգաբնակութիւնն է վճարում և որի վրա բարոյական պարտականութիւն կար օգնութեան ձեռք կարկառելու ազգաբնակութեանը, լուռ ու անտարբեր հանդիսատես է լինում և օգնութեան դիմողներին ձեռնունայն յետ է դարձնում։

Մի՞թէ վերջապէս մեռել է մեր մէջ խիղճը, մարդկային զգացմունքը։

— Հաց… հաց… աղաղակում են բնութեան արհաւիրքի զոհերը, անմեղ մանուկների աղաղակները երկինք են բարձրանում, իսկ մենք՝ մեր բարեգործական հիմնարկութիւններով, մեր հարուստներով ու ինտելիգենցիայով լուռ ենք, անտարբեր։

Մեր ականջները խլացել են օգնութիւն կանչող աղաղակներից, մեր աչքերը կուրացել թշուառութիւնը տեսնելու համար և սիրտներս քար դարձել մեր եղբայրների ու քոյրերի տանջանքները զգալու համար։

Մենք մարդ չենք, մարդկային բոլոր սուրբ զգացմունքները մեռել են մեր մէջ, և մենք ոչինչ չենք զգում։

Ամբողջ գիշերները մենք քէֆեր կարող ենք անել «կազինօներում» և նման տեղերում, հարիւրներ կարող ենք շպրտել շանսօնետկաների ոտքերի տակ, շամպանիայի գետերի մէջ կարող ենք լողացնել անառակութեան գրկում թաւալուող գեղեցկուհի կանանց, այդ բոլորը մենք կարող ենք անել, մենք անում ենք և կանենք, իսկ ձեռք մեկնել սովի ճիրաններում գալարուող մարդկանց, մի կտոր չոր հաց մեկնել հաց աղաղակող թշուառ մանուկներին, այդ արդէն մեր գործը չէ։

Որքան անխիղճ, որքան ստոր ենք մենք։

Վ. Թումանեան

ԷՍ Ո՞ՆՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ Է

Իսկապէս որ՝ էս ո՞նց ժողովուրդ է. կռիւը, ղալմաղալը, տուր ու դմբոցը ամենօրեայ կրկնուող սովորական երևոյթներ են այստեղ։ Մէկը կռւում է փողի, միւսը՝ ջրի, մի երրորդը «ալկօհօլի» ազդեցութեան տակ, և այսպէս շարունակ կռիւներ են կատարւում թէ քաղաքի մէջ և թէ նրանից դուրս՝ այգիներում, բոստաններում և այլ վայրերում։

Ժողովուրդը որ ազէտ է, դա անհերքելի մի ճշմարտութիւն է. որովհետև պարզված է, որ կրթված ժողովուրդների մէջ կռիւները, ինտրիգանները հազուագիւտ երևոյթներ են։

Պէտք է կրթել ժողովրդին,—ասում են գրեթէ բոլորը, թէ քահանայ, թէ ուսուցիչ և թէ ինտելիգենտ տարրերը։

Բայց ո՞վ կրթէ, ո՞վ է պարտական կրթելու մի ստուար ժողովուրդ, որը դարերից ի վեր նահապետական նիստ ու կացով ապրած՝ ձգտում է միայն փող աշխատել և ապրել, առանց հետաքրքրվելու թէ աշխարհում ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ։

Մեր մասսան ապրում է ուտելու համար, այլ ոչ ուտում՝ ապրելու—առանց կարողանալու գնահատել այդ բառերի տեղափոխութիւնը։

Ո՛չ ոք չի ժխտի, որ առանց ուտելու ապրել կարելի չէ, սակայն այստեղ էլ կայ չափ ու սահման, որից դուրս գալը մի մեղսագործութիւն է համարվում հէնց բուն առողջապահական տեսակէտից։

Համեմատելով ուրիշ երկիրների ժողովուրդների հետ, այստեղի ժողովուրդը աւելի քան ապահով դրութեան մէջ է. օրինակ՝ Սիսիանի շրջանի ժողովուրդը, որ այնքան սուղ պայմաններում է, որ իրան հարկաւոր ուտելիքը փողով է գնում այստեղից, նրանք սիրով յօժարվում են ծախել իրանց չուխաներն ու ստանալ հարկաւոր կրթութիւնը. յիշում եմ, երբ Երևանի թեմական տեսուչը դասախօսում էր Սիսիանի գիւղերից մէկում, ժողովուրդը մի առանձին ուշադրութեամբ էր լսում, և ի վերջոյ լսվում էին սրանց բերանից՝ «ափսոս, որ պատահական է այդ և ոչ մշտական, կամ որոշ օրերում նշանակուէր»։ Այսպէս ուրիշ՝ գիւղի ժողովուրդը ձգտում է նմանվել իրանից աւելի առաջադիմածներին, քաջ գիտենալով որ դրանցից կարելի է միայն ստանալ առաջադիմական ուղղութեան սաղմերը։ Իսկ այստեղ՝ այդպիսիներին համարում են քաղցած մէկը և ետևից ծաղրում, ծիծաղում։ Սա ոչ թէ գիտակցական վերաբերմունքի հետևանք է, այլ և տգիտութեան։

Մտադրութիւն կայ այստեղ բանալ «պրօգիմնազիա», որտեղ կուգան միայն մատաղ սերունդը, ապագայ ժողովուրդը. Իսկ ներկայ ժողովուրդը կը մնայ էլի նոյն տգէտը, նոյն նախապաշարվածը։ Ցանկալի կը լինէր, որ պրօգիմնազիային կից բացվէին հասակաւորների կիրակնօրեայ դպրոց, կամ երեկոյեան դասընթացքներ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն քաղաքի ժողովրդի, այլ և մօտիկ գիւղերի ժողովուրդների համար։

Ա. Յակոբեան

Հին-Նախիջևան, 6 օգոստ.

ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԴԵՐԸ

Հայկական գաւառներից ամենայետամնաց, ամենախաւար գաւառը՝ Ջաւախքն է այժմ։ Ջաւախքն է, որ մի ամբողջ դար շարունակել է իր նահապետական կեանքը, սովորութիւնները։ Գիտութեան, ուսման ճառագայթները շատ դժուարութեամբ են թափանցել նրա սիրտը, հոգին և քիչ արդիւնք տուել։

Վերցրէք Ջաւախքը. ովքեր են ազգաբնակութեան մեծ տոկոս կազմողները. գիւղացիները, աշխատաւոր դասակարգը, որը զուրկ լինելով ամեն բանից՝ խարխափել և խարխափում է խաւարի, տգիտութեան մէջ։ Չը կան դպրոցներ բաւականաչափ և լաւ հիմքերի վրա դրված, ուր սնվելով գիւղացու որդին ու աղջիկը՝ կերպարանափոխէին, վերածնէին ընտանիքը, գիւղը և հայրենիքը։ Չը կան անհատներ, որոնց ճակատները փոթորկի դէմ արած՝ ցոյց տային նրանց դէպի փրկութիւն, դէպի լոյս տանող ճանապարհը։

Փոյթ չէ, թէ այդպիսիները պիտի արժանանան ամբոխի կծու արհամարհանքին ու պարսաւանքի։

Գիտէք արդեօք, որ այդ խուլ անկիւնում, այդ խաւար գիւղում, մեր անփութութեան շնորհիւ, որքան բնածին տաղանդներ, գուցէ և հանճարներ ծնվում և զոհ են գնում։ Այնտեղ՝ գիւղում են ծնվել Աբովեանները, Պռօշեանները։

Ահա 4—5 տարի է, ինչ մեծ դժուարութիւններով կառուցվեց մեր շրջանի Սուլդա գիւղի ծխ. դպրոցը։ Այսօր այդ գիւղում, կոնաձև բլրակի գագաթին, բարձրանում է գիւղական ուսումնարանի շէնքը, որը գիտութեան, ուսման բոյն է դառնալու հայ մանուկների համար, ուր սնվելով, թև առնելով պիտի թռչեն հարազատների գիրկը և լոյս սփռեն խղճուկ հայ գիւղերում։

Ի՞նչ կայ սրանից աւելի գեղեցիկ գործ։

Ուրախութիւն, հրճուանք է պատճառում գիտողին, երբ գիւղացու մանուկները, առաւօտեան վաղ, չարան-չարան, գրքերը կռնատակերին վազում են դպրոց, սովորում այնտեղ՝ բարին ու չարը, տեսնում խաւարն ու լոյսը։ Եւ մարդ անհուն բերկրանքով յիշում է, որ մեր խեղճ շինականի որդիները գրագէտներ են դառնում, շնորհիւ այդ դպրոցի, և հէնց իրենք շինականին այլևս մի նամակի համար չէ անցնելու դռնէ-դուռ, գիւղից-գիւղ. չէ որ իր ընտանիքի գաղտնիքը այլևս չէ իմանալու հարևանը կամ մի ուրիշը. վերջապէս չէ որ ինքը գիւղացին այն չէ, ինչ որ առաջ։

Արդ՝ մեր շինականը տեսնելով դպրոցի այս բարեբեր ազդեցութիւնն իր ամբողջ կեանքի վրա՝ պիտի թողնէ խնայած իր հին հասկացողութիւնները, թէ եկեղեցի է իրան հարկաւոր և ոչ թէ դպրոց, քանի որ այժմ պարզ հասկանալի է, որ երկուսի արժէքն էլ նպատակն էլ միևնոյն է՝ մարդկանց դարձնել բարոյական։

Մեր կեանքում ներկայումս անհրաժեշտաբար հարկաւոր է դպրոց, դպրոց, որտեղ սովորենք, լսենք ուսուցչի բերանից և այն բարոյական խրատները, քարոզները, որ ասում է եկեղեցում քահանան առանց հասկանալու։

Այսպիսի պայմաններում անհրաժեշտ է, որ Սուլդայի հոյակապ դպրոցը գրաւէ շրջակայ հայ գիւղացիների ուշադրութիւնը և շարժէ նրանց բարի նախանձը՝ հետևելու բարի օրինակին։

Ucho

Ախալքալաք

ՑԱՒԱԼԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

I

«Տգիտութիւնը մայր է ամենայն չարեաց»,—միլիօնաւոր անգամ կրկնված ճշմարտութիւն է։

Վերցնենք օրինակի համար մի բազմազան հայաբնակ քաղաք, տեսնենք այդ ժողովրդի լուսաւորութեան, կրթութեան, ինքնաճանաչութեան բարոյական աստիճանը, մակերևոյթը և այնուհետև թոյլ տանք մեզ լուսաւորված ժողովուրդ համարելու։

5—6000 բնակիչ ունեցող հայաբնակ վայրում հազիւ 5—6 հոգի հայերէն—էլ չենք խօսում ռուսերէնի մասին—օրաթերթ ստացող կայ։ Աշխարհը փուլ գայ իրանց գլխին. բրին՝ բէխաբար կը մնան, թէ ինչ է կատարվում դրսի աշխարհում։ Նրանք, բնակիչները, բոլորովին մասն չունեն, տեղեկութիւն չունեն… Տարիներով այդ բազմամարդ քաղաքը ընթերցանութեան համար գիրք կամ ամսագիր չի մտնի. չէք կարող վստահօրէն մի որևէ հարուստ վաճառականի կամ փոքր ի շատէ զարգացած երիտասարդի թէկուզ 20—50 կոպէկանոց շահեկան գիրք առաջարկել։

— Բան չունէս… մեր տանը ո՞վ է կարդացողը։ Տա՛ր, ուրիշին ծախիր…

Հարևանն էլ մի ուրիշի մօտ ձեզ կուղարկէ, որպէսզի գլխից ռաղ անէ։

Լրագիրները կոչ են անում, թէ այս-ինչ տեղը սով է, հազարաւոր մարդիկ, կիներ ու անմեղ երեխաներ սովի ճիրաններում իրանց հոգին են աւանդում, կամ թէ չէ՝ մի որևէ ազգային գործչի կամ թերթի յոբելեանն է կատարվում, որոնց պէտք է օգնել նիւթապէս, կեանք տալ, որովհետև նրանց կեանքը մեր կեանքն է, մեր գոյութիւնն է։

— Դիմեցէք միլիօնատէրերին. թող նրանք հոգան այդ կարիքը… մեր ինչ դարդն է կորվել… Մենք վաճառական մարդիկ ենք։

— Դուք էլ ձեր տասնեակ կամ հարիւրհազարներից մաս հանեցէք բարեգործութեան,—յորդորում էք այդպիսի քարասիրտ հարուստին։

— Է՜հէ… ղէ բոլ ա, գլուխս տարար,—լինում է կոպիտ պատասխանը։

Քաղաքում կան տասնեակ չքաւոր ընտանիքներ, որոնց մանկիկները մերկ, բոկոտն, ցնցոտիների մէջ փաթաթված՝ «մայրի՛կ, հայրի՛կ, հաց եմ ուզում» են աղերսում, սակայն ծնողները աչքները փակում են՝ չը տեսնելու այդ սրտակտոր տեսարանը։ Նաբաբ, մեր հարուստների հարուստ դախլից կոպէկ է դուրս գալիս այդ դժբաղդների օգտին, երբ թերթը ձեռքներիդ դիմում էք նրանց։

Ո՛չ, կրկնում եմ, ո՛չ. չնչին բացառութեամբ։

Ուսման ծարաւի տասնեակ երեխաներ ուսման տաճարից դուրս են վանվում տարեկան 4—8 րուբլի թոշակ չը վճարելուն համար։

Նաբաբ, երբ դիմում էք անզաւակ կամ զաւակ ունեցող հարուստին, նա թէկուզ մէկի կեանքը փրկելու համար հանում է իր գրպանից ու տալիս 4—8 րուբլին։

Չնչին բացառութեամբ՝ դարձեալ պիտի կրկնենք՝ ոչ։

Նաբաբ, երբ ձեր անապահով դպրոցը փակումից փրկելու համար հրաւիրում էք խորհրդակցութեան՝ ժողովրդին, 10—15՝ այն էլ աղքատ՝ մարդուց աւել հաւաքվում են։ Հապա ո՞ւր են գնում այդ ժամանակ մեր հարուստները. Նրանք քէֆի, կեր ու խումի հետ են, գլուխ չունեն այդպիսի դատարկ բաների հետ, որովհետև այդ «բաղդաւորների» որդիքը չեն ուսանում մեր միջասեան «անպէտք» դպրոցում։

Մեղա՛յ, Աստուծոյ էս խօսքիս, մեղադրանքիս կէսը ետ եմ վերցնում. որովհետև մեր ժողովուրդը այնքան էլ յետամնաց, անկուլտուրական, չը լուսաւորված ժողովուրդ չէ։ Եթէ սաստիկ չէք հաւատում, մի կիրակի օր, մի երեկոյ դուրս եկէք փողոց, հրապարակը, և դուք կը համոզվէք, որ առածս ճիշդ է։ Ամենայետին վաճառականի, խեղճ ու կրակ բանկալի կնոջ ու աղջկերքը վերջին մօդայով հագնված, պճնազարդված՝ խոսնջիկ-մոռնջիկ անելով, կոտրատվելով զբօսնում են։

Ամառ է։ Հաւաքվել են հարիւրաւոր ամարանոց եկողներ, կան միջնակարգ և բարձրագոյն կրթութիւն ստացողներ երկու սեռից։

Կարող կը մնաս, որ մէկի բերանից մի հայերէն իր մայրենի լեզուով խօսք լսես։

Ինչո՞ւ, մի՞թէ այդչափ արհամարհված է մայրենի լեզուն նրանց աչքում. մի՞թէ նրանց ուղեղից, սրտից կը խլվի, կառնվի օտար լեզուով ստացած գիտութիւնը, մտաւոր պաշարը, եթէ միևնոյն ժամանակ իրանց մայրենի լեզուն էլ գործ ածեն տանը, հէնց դուրսն էլ։

Դա մի՞թէ անպատւութիւն են համարում մեր՝ ուսման ծարաւի երիտասարդները, եղբայրներն ու քոյրերը։

Ինչի՞ց է, որ ներկայիս հայերի ձեռքից հարստութիւնը, առևտուրը, աջողութիւնը հետզհետէ անցնում է մեր դրացի թուրքերի ձեռքը։

Դա նրանից է, որ մինչդեռ մեր քոյրերը շռայլ տնաւեր մօդայի ճիրաններում խեղդվելով, տնաւեր «վէչէրներին» հարիւրներ ծախսելով, թղթախաղի ու լօտօյի վրա տասանոցներ շպրտելով, խեղճ տղամարդու գրպանները մաքրազարդում են այս քասատութեան տարիներում, սակաւապէտ մեր թուրք հարևանները իրանց դառն քրտինքով վաստակած կոպէկները խնայելով՝ մի քանի տարուց յետոյ տեսնում ես, որ տասնեակ հազարների տէր դարձան, կանգնեցրին իրանց համար հոյակապ տներ, խանութներ, շինեցին դպրոց, հաստատեցին բարեգործական ընկերութիւն, կառուցին վայելուչ մզկիթ, որ տեսողը աքանչանում է, զմայլվում է։

Իսկ մենք մեր հայրերի, պապերի կառուցած տաճարը, եկեղեցին, դպրոցի շէնքը թողնում ենք, որ քայքայվի, տանիքը մի գեղեցիկ օր փլչի ու մեզ տակով անի։

Կարողանո՞ւմ ես մի քանի տասնեակ, հարիւր րուբլի հաւաքել հարուստներից, որ մի թեթև «պօչինկա» անես, որ դիմանայ մի քանի տարի ևս. Կամ թէ չէ՝ իրանք հարուստները ինքնաբերաբար գալիս են օգնութեան ձեռ։

Բաւ լինի։ Բացառութիւնը զովելի է։

Զաքաթալա

Սօյգաղէ

ՓԱՍՏԸ ՉԸ ՀԵՐՔՎԵՑ

Շուշու Մարիամեան օր. դպրոցը մեր կողմից—ի հարկէ գեղեցիկ նկատումներով—որոշ վերլուծութեան էր ենթարկվել, գլխաւորապէս աչքի առաջ ունենալով միայն խոշոր ու աչք ծակող հանգամանքներն ու երևոյթները։

Սակայն մեր անաչառ քննադատութիւնը, մեր ճշգրիտ բացատրութիւններն ու գնահատումները այստեղ «Ղարաբաղի» մէջ աղաւաղվեց, խեղաթիւրվեց և իբրև թէ քննադատվեց։

Այդ թերթում որպէս հերքում մեր՝ «Մշակում» լոյս տեսած յօդուածի, տպվեց մի յօդուած երեք մասի բաժանված։ Եւ յօդուածի հեղինակները մտածեցին երևի, թէ այդ «հերքումով» կարողացան ջրել իմ գրածները, ուստի և կպան դարձեալ ազգօգուտ գործերին…

Տէրը դրանց հետ։

Իմ ընդդիմախօսների այդ երկար ու բարակ յօդուածները կարդալով մարդ աշխատում է մի ուղիղ դատողութիւն գտնել, բայց ի զուր։ Եւ անաչառ ընթերցողը խակոյն հէնց առաջին հայեացքից կարող է նկատել, որ այդ «հերքումագրի» հեղինակը ոչ թէ ի նկատի է ունեցել իրերի ճիշդ պարզաբանութիւնը, այլ լոկ անձնական հաշիւներ։

Բայց հերքվեց, որ դպրոցում ուսուցիչների և աւագի հետ դժգոհութիւններ չեն եղել. պարզվեց, որ դպրոցական կեանքը խաղաղ է անցել, որ վերատեսուչն իր պարտաւորութիւնները կատարել է։

Այդ թող հետաքրքիր ընթերցողն ինքն իմանայ։

Ինձ պատասխանում են, թէ Մարիամեան դպրոցում առաջնորդվել են—մի դասարանի մասին է խօսքս—եկեղեցական ծրագրով։

Ուղղակի ապշեցուցիչ յայտնութիւն։

Իմ ընդդիմախօսները երևի չեն իմանում, որ տողերիս գրողն աւելի քան տեղեակ է դպրանոցում կատարված դէպքերին։

Արդ՝ առաջարկում եմ նորից նայել ծխ. դպրոցի կանոնադրութեան և Գ. դասարանի այն ծրագիրներին, որ դրված է 1911—12 ուսումն. տարում դասատու ուսուցիչների կողմից։

Իմ ընդդիմախօսները «Ղարաբաղի» № 53-ում, անկապ նախադասութիւններից յետոյ, իրանց յօդուածը այսպէս են վերջացնում. «Մարիամեան դպրոցը բառիս բուն մաքով վեցամեայ դասընթացք ունեցող դպրոց է եղել»։ Բայց յանկարծ այս բառերից յետոյ, նոյն թերթի № 54-ում գրում են. «1912—13 ուսումն. տարում էլ կը բացվի Է. բաժանմունք, որպէս լրացուցիչ դասարան Զ. բաժանմունքի. ահա այդ դասարանն է լինելու միջնակարգ դպրանոցի օղակը և Յօհանեան դպրոցի IV-րդ դաս. պատճէնը»։

Կարիք կա՞յ բացատրութեան, արժէ՞ք աւելի խօսել։

Չեմ ուզում երկարացնել։

Ինչ վերաբերում է այն անվայել դարձուածքներին, որոնք յիշեալ մի շարք յօդուածներում լոյս տեսան իմ հասցէին ուղղված, ես ամբողջովին յետ եմ վերադարձնում այդ դարձուածքներն իրանց հեղինակներին։

Շուշի, 4 օգոստ.

Համլէտ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Անողոք ճակատագիրը կարծես որոշել է՝ ընդմիշտ դառնութեան մէջ պահել խեղճ գեղջուկին։ Մի աներևոյթ գերբնական ոյժ կարծես սև վճիռ լինի դրած՝ որ յաւիտեան մի կենսուրախ օրի չարժանանայ չարքաշ գիւղացին։

Մտէք գիւղը և դուք ականատես կը լինէք մի շարք երևոյթների, որոնց հանդէպ չէ կարող հանդուրժել ոչ մի փոքր ի շատէ զգայուն սիրտ։

Արձանագրել այն ամենը, ինչ որ կատարվում է, աւելորդ եմ գտնում, որովհետև հայ ընթերցողը իր կեանքում բազմիցս անգամ առիթ է ունեցել կարդալու գեղջուկի կեանքից գրված տխուր, սրտաշարժ նկարագրութիւններ։

Սակայն մի երկու խօսք ասել այն հիմնական կէտերի մասին, որոնց՝ կեանքի մէջ իրականացնելը կը բարեփոխէ գիւղացու դրութիւնը, կարևոր եմ համարում։

Բոլորիս յայտնի և անհերքելի փաստ է, որ գիւղացու տնտեսական և բարոյական քայքայման պատճառը, նրա իրաւաբանական գիտութիւնից զուրկ լինելը՝ հետևանք է նրա տգիտութեան։

Տգէտ է գիւղացին,—ահա աղաղակող փաստը, որի դէմ կարծես անզօր լինենք ոչինչ անելու։

Ասում ենք, որ կուլտուրական ազգ ենք։

Թէ որքան ճիշդ է այդ, չը գիտեմ, բայց գիտեմ հաստատ, որ անպարտաճանաչ ենք, որ չենք շահագործում մեր գիտութիւնը, որ խնայում ենք մեր գիտութիւնից բաժին հանել տգիտութեան ճիրաններում խարխափող այնքան դժբաղդ գեղջուկին։

Որ այդ այդպէս է, որ հայ ինտելիգենցիան չէ հետաքրքրվում գիւղականով, որ հայ ուսուցիչը ինքն է՝ դէպի մտաւոր կարիք զգացող իր շրջապատը, այդ այնքան է պարզ և ակնյայտնի, որ բացատրութիւնների կարիք չը կայ։

Վերցնենք հէնց այս 6—7-ամեայ մեր գիւղական ուսուցիչների գործունէութիւնը, թէ արդեօք որևէ արդիւնք տուել են, և կը տեսնենք, որ գիւղերում տիրապետում են հին նախապաշարմունքները, հին սնոտիապաշտութիւնները և տակաւին ոչ մի բարեփոխութիւն չէ մտել գիւղական կեանքի մէջ. կը տեսնենք, որ գիւղերում առաջվանից աւելի վատթար կերպով առաջ են եկել թշնամութիւն, ոխակալութիւն, ստոր դաւադրութիւններ և կարօրէն իրար տապալելու ջանքեր։ Եւ երբ վերլուծութեան ես ենթարկում այդ ամենը, գտնում ես, որ տգիտութեան արդիւնք է։

Արդարև՝ որոշ գիւղերում ուսուցիչներ փորձեր են արել գիտակցութեան բերելու ժողովրդին, բայց, այնուամենայնիւ, դրական արդիւնքը քիչ է եղել։

Ի՞նչ է դրա պատճառը։

Մի՞թէ անհնարին է կուլտուրական գործ կատարել գիւղերում։

Որքան մարդ մտածում է՝ գալիս է այն եզրակացութեան՝ որ կարելի է. այո՛, կարելի է գիւղացուն ինքնագիտակցութեան բերել, բայց ոչ այն եղանակով, ինչով փորձել են մեր ուսուցիչները և հիասթափվել։

Անհերքելի ճշմարտութիւն է, որ առանց կենդանի գործի լոկ խօսքով որևէ ցանկալի նպատակ չէ կարելի իրագործել. որքան ուժեղ էներգիա էլ գործադրես, դարձեալ դրական արդիւնքը քիչ է, որովհետև մարդիկ խօսքի և գործի միջև ահագին տարբերութիւն են տեսնում։

Այսպէս, օրինակ, ինչ նշանակութիւն կունենայ մի ուսուցչի գաղափարական քարոզը, երբ նա իր կենցաղավարութեամբ կեանքի մէջ ընդհակառակն է ցոյց տալիս, կամ թէ ինչ արժէք կունենայ մի ուսուցչի բարոյագիտութիւն քարոզելը, երբ հէնց ինքն է առաջին գիւրին գայթակղողը։ Կարող է որոշ հեղինակութիւն կամ ազդեցութիւն ունենալ մի ուսուցիչ, երբ նա բարոյական զօրեղ կամքից զուրկ լինելով՝ ենթարկվում և գործում է իր կրքերի ցուցադրած ճանապարհով, հետևելով ամեն մոլութիւններին։

Մեզ պատահել է տեսնել, թէ ինչպէս ուսուցիչը գիւղում փչացած երիտասարդների հետ «վէգի» է խաղում և իր այդ արարմունքը արդարացնում զանազան սոփեստութիւններով։

Այս և նման երևոյթները մեզ բերում են այն համոզման, որ, այո, եթէ այսպիսի յատկութիւններով օժտված մարդկանց խնամքին թողնվի մեր գիւղերի կրթական-կուլտուրական գործը, այդ դէպքում դրական ոչինչ չէ կարելի յուսալ։

Սակայն որպէս զի ընդ միշտ հեռու վանած լինենք յոռետես մտքերը և մեր լաւագոյն սպասելիքները իրականացած՝ անպայման պէտք է ունենանք այնպիսի ուսուցիչներ, որոնք տոգորված դժբաղդ գիւղացու լուսաւորութեան գործով, նրա շահերով, ազնիւ ու անբիծ գործունէութեամբ բարի օրինակ հանդիսանան ու այդպիսով կատարեն իրանց վրա դրված սրբազան պարտականութիւնները։

Ահա գիւղացու կեանքի կենսական ամենամեծ պահանջը։

Սակայն այստեղ հարց է ծագում, թէ ո՞վ կը տայ գիւղացուն այդ բարեմասնութիւններով օժտված ուսուցիչներ։

Չէ որ ուսուցիչ վարձողը ծխական հոգաբարձուներն են. իսկ սրանց հօ յայտնի է, որ էժան գնով վարձելու տենչով այնպիսի ուսուցիչներ են հրաւիրում, որոնք «հազար թուկից» փախած են լինում և գլուխ պահելու համար ամենամատչելի վարձով համաձայնվում են ուսուցչութիւն անելու, մատաղ սերնդի դաստիարակչութեան գործ ստանձնելու։

Եւ բնականաբար գալիս ենք այն եզրակացութեան, որ ուսուցիչ վարձելու գործը պէտք է ստանձնէ թեմական տեսուչը։

Վերջինս, որպէս կարող և կառավարող մարմին, պէտք է գտնէ ընդունակ և արժանաւոր ուսուցիչ ու այդպիսիին միայն յանձնէ ուսուցչութեան պաշտօնը իր ամենայն պատասխանատուութեամբ։

Միևնոյն ժամանակ թեմ. տեսուչը պէտք է և ուսուցիչների ձեռքը տայ մի խելացիօրէն կազմած ծրագիր, որպէս զի սրանք ըստ այնմ գործելով առանց խոչընդոտների հանդիպելու կարողանան ակտիվ դեր կատարել գիւղական կեանքում։

Թեմ. տեսուչը պէտք է աչալուրջ կերպով կօնտրօլ հանդիսանայ ուսուցիչների վրա և հսկէ, որ սրանք գայթակղեցուցիչ քայլեր չանեն։

Ուսուցիչների պարտականութիւնների մէջ պէտք է մտցնել նաև հետևեալը.

1) Դասախօսութիւններ կարդալ ժողովրդին հասկանալի լեզուով։

2) Ծանօթացնել ժողովրդին դրսի աշխարհում կատարվող անցքերի հետ և այդպիսով յարաբերական կապ ու հաղորդակցութիւն ստեղծել գիւղի և քաղաքի միջև։

3) Բացատրել գիւղացուն, թէ ինչից են ծնվում այնքան կործանարար չարութիւնները, և խաղաղ աշխատանքով պարապելու օգտակարութիւնը հասկացնել։

Ուսուցիչը թերևս անզօր լինի կատարել այսքանը, մանաւանդ որ զբաղված է լինում դպրոցական գործերով։ Այդ դէպքում նա պէտք է իր շուրջը համախմբէ գործելու ընդունակ երիտասարդների ու սրանց օգնութեամբ ի կատար ածէ այդ ամենը։

Եւ մենք հաւատացած ենք, որ անձնուիրութեամբ ու անկեղծութեամբ գործ ձեռնարկող ուսուցիչը անշուշտ իր միջավայրում բարոյական աջակցողներ շատ կունենայ։

Ա. Ասլանեան

Խանքենդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայ Կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը օգոստոսի 12-ին Պետերբուրգից ճանապարհվեց Կովկաս։ Նորին Պայծառափայլութիւնը օգոստոսի 15-ին, ցերեկվայ ժամը 1-ին, կը լինի Կիսլովօդսկում և այնտեղ կը մնայ երկու օր, որից յետոյ կուղևորվի Թիֆլիս։

◆ Կիրակի օր, օգոստոսի 12-ին, ճեպընթաց գնացքով Թիֆլիս ժամանեց Վրաստանի էկզարխը, որին դիմաւորելու էին գնացել ուղղափառ հոգևորականութիւնը՝ գլուխ ունենալով Պիմէն ու Անտօնի եպիսկոպոսներին և տեղական ադմինիստրացիայի ներկայացուցիչները։

◆ Օգոստոսի 20 ին Թիֆլիսից կ'չուէ Մոսկվա կուղևորվեն կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դպրոցների

40 լաւագոյն աշակերտներ, դիրեկտոր Ա. Բոգոյավլենսկիի և ինսպեկտոր Ե. Զոգօշվիլիի ղեկավարութեամբ մասնակցելու Հայրենական պատերազմի 100-ամեակի հանդէսներին:

◆ Բամբակագործների համագումարին մասնակցելու համար մինչև այժմ ուղարկված են 500 հրաւիրաթերթեր:

◆ Ղարաբաղի փորձադաշտի պահպանութեան համար առաջիկայ տարի պահանջվում է 18,590 րուբլի, փորձադաշտին կից գտնվող անասնապահական ֆէրմայի համար առանձին՝ 6540 ր. և նոյն տեղի բանւորական ուսումնարանի համար 4047 րուբլի:

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան բաժանմունքը դիմել է Թիֆլիսի բորսային կօմիտէտին՝ խնդրելով ընտրել մի պատուիրակ առևտրի ճիւղից:

◆ Թիֆլիսի բորսային կօմիտէտը, ի նկատի ունենալով Ա. Ն. Միլօվի բացակայութիւնը, որոշել է կօմիտէտի նախագահի պաշտօնավարութիւնը յանձնել Ս. Խ. Սուլխանօվին և կօմիտէտի համար շէնք վարձել Տուրինեանի տանը:

◆ Ստացանք Վիէննայի Մխիթարեանների մի նոր շքեղ հրատարակութիւնը «Ակնարկ մը Վիէննական Մխիթարեան Միաբանութեան գրական գործունէութեան վրայ» վերնագրով: Այս գիրքը, որի մէջ զետեղված են 67 պատկերներ, մի աւելորդ անգամ գալիս է ապացուցելու անխոնջ հայրերի գործ դրած ջանքը տպագրական տեխնիկայի մէջ: Թէ թուղթը և թէ տպագրութիւնը վերին աստիճանի մաքուր և գեղեցիկ են: Թողնելով ապագայում այդ հրատարակութեան մասին խօսելը, առայժմ այսքանը միայն կասենք, որ այս հանդէսը արտատպութիւն է «Ցուշարձան գրական ժողովածուից», որը իր ժամանակին Վիէննայի Միաբանութիւնը լոյս է ընծայել իր վանքի հաստատման 100-ամեակի առիթով: «Ակնարկը» նպատակ ունի գոհացնել այն անձանց հետաքրքրութիւնը, որոնք կը կամենային ծանօթանալ միաբանութեան սկզբնաւորութեան և ծագման հետ:

◆ Թիֆլիսի 5-րդ արական գիմնազիայում (Հաւլաբարի) լրացուցիչ և ընդունելութեան քննութիւնները նշանակված են օգոստոսի 21-ի: Օգոստոսի 31-ին կը սկսվի ուսումը:

◆ Հաւլաբարի նորաբաց իգական գիմնազիայի դիւանատանը վերջին օրերս բազմաթիւ խնդիրքներ են ստացվել երեխաների ընդունելութեան համար: Միմիայն 30 խնդիր տրված է 2-րդ դասարան մտնելու համար: Այս վերջին հանգամանքն ի նկատի առնելով, հոգաբարձական խորհուրդը մտադիր է սեպտեմբերից՝ բացի նախապատրաստական և 1-ին դասարանից բանալ նաև 2-րդ դասարան:

◆ Հաւլաբարի իգական գիմնազիայի տեսչուհի է հրաւիրված տ. Խամենտովսկայան, որ այժմ գտնվում է Շվէյցարիայում:

◆ Քաղաքային բուժարաններում յուլիսին եղել են ընդամենը 6933 հիւանդ, որոնք միասին այցելել են 15,878 անգամ:

◆ Քաղաքային լօմբարդը յուլիս ամսվայ ընթացքում գրաւականով տուել է 25,793 ր.: Նոյն ժամանակամիջոցում լօմբարդում գրաւ դրած իրերից գնել են 22,266 ր.:

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը դիմել է Անդրկովկասեան երկաթուղիների կառավարչին, խնդրելով երկաթուղուց չը ստացված ապրանքների աճուրդավաճառը կատարել քաղաքային աճուրդի դահլիճի միջոցով:

◆ Օգոստոսի 16-ին նշանակված է Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան խորհրդի ժողովը:

◆ Խաղողի բերքը Թիֆլիսի նահանգում միջակից պակաս է, թէև որակով լաւ է:

◆ Աւճալա կայարանին մօտիկ շինում են շիշեր պատրաստելու գործարան:

◆ Օգոստոսի 10-ին Ելլախ կայարանից գնացքը ճանապարհվելիս 3-րդ կարգի ուղևոր Սօֆիա Քօչարեանը իր ծծկեր երեխայի հետ միասին մի վագօնից միւսը անցնելիս ընկել է գնացքի տակ և ստացել սաստիկ ջարդուածքներ ու վէրքեր գլխից: Երեխան անվնաս է:

◆ Օգոստոսի 12-ին, ցերեկվայ ժամը 1-ից քիչ անց, I Երուսաղէմսկայա փողոցի վրա Դանդուրօվի ամանեղէնի պահեստում անյայտ պատճառից հրդեհ ծագեց: Հրդեհը ճարակեց պահեստը ամբողջ տնով, ապա անցաւ հարևան Աբուաղխանօվի, Սիմէօն Կուրչիշվիլիի և Մովսէս Ջէյրանեանի տները: Հրդեհաշէջ խումբը հանգցրեց ամբողջ թաղին սպառնացող հրդեհը: Վնասները խոշոր են:

◆ Օգոստոսի 12-ին, ցերեկվայ ժամը 3-ին, Էջմիածնի գաւառի Սամադաւրիշ գիւղի բնակիչ Մարիա Ալէքսանդրօվնա Սարգսեանը, որը ապրում է Աբաս-Աբաղսկայա նրբափողոցի № 10 տանը, ինքնասպանութիւն գործելու նպատակով նաշադիրի սպիրտ ընդունեց: Նրան իսկոյն ուղարկեցին Արամեանցի անուան հիւանդանոցը: Նրա կեանքին վտանգ չէ սպառնում:

◆ Օգոստոսի 13-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Մուշտայիդի այգու մուտքի մօտ Կովկասեան շերամապահական կայարանի ջրմուղի շէնքում հրդեհ առաջացաւ: Հրդեհաշէջ խումբը վրա հասաւ և հանգցրեց: Մարդկանց հետ վնաս չը պատահեց:

◆ Վակէում Ցալկալամաձէի տանը ապրող Բօրչալուի գաւառի Եղիֆիլիսա գիւղացի Անաստասի Ցիլօֆիլակրօվիչ Ընկելօվը (ուսուցիչ), ներքին խանգարմամբ տառապելով, օգոստոսի 13-ին, ջուր խմելու փոխարէն, սխալմամբ խմել է սենեակի բաժակում գտնվող ֆրանսիական սկիպիդարը: Նրան տարել են Միքայէլեան հիւանդանոց:

◆ Դուշէթսկի տուպիկում Թիֆլիսեցի Մարիա Տիտօվնա Միշլիօն գնդակի մի հարուածով փորձել է վերջ տալ իր կեանքին: Վիրաւորին ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց: Բժիշկների ասելով նրա կեանքին վտանգ է սպառնում:

◆ Յուլիս ամսվայ ընթացքում Թիֆլիսում կատարված է 93 յանցագործութիւն. յանցաւորներից կալանաւորված են 80 հոգի փաստերի հիման վրա, կասկածի հիման վրա 15. չեն բռնված 14 դէպքում միայն: Տեղի են ունեցել շուրջկալներ անցագիր չունեցողներին կալանաւորելու նպատակով 98 անգամ, որոնց միջոցին կալանաւորվել են 1465 հոգի. մուրացկանների դէմ՝ 50 շուրջկալ, կալանաւորված են 150 հոգի: Ծառայութեան մէջ թերանալու համար պատժի են ենթարկվել 63 պաշտօնեաներ և 161 ստորին ոստիկաններ: Յանցաւորներին զանազան ժամանակներում բռնելու գործում եռանդ ցոյց տալուն համար շնորհակալութեան են արժանացել թաղական աւագ վերահսկիչներ՝ 1-ին ոստիկանամասում՝ Տրեպենին, 4-րդում՝ Գավրիլէնկօ, 5-րդում Բուտու, 7-րդում՝ Քանանօվ և 12-րդում՝ Բասիլօվ:

◆ Օգոստոսի 13-ին ոստիկանութիւնը շուրջկալ կատարելով քաղաքում կալանաւորել է 81 հոգի անցագիր չունեցողներ և մուրացկաններ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Արտիստական թատրոնում առաջիկայ թատրոնական սեզոնին կը խաղայ անտրէպրէնեօր Պ. Օ. Զարէչնօվօյի կազմած ռուս դրամատիկական խումբը, որ բաղկացած է 44 հոգուց (21 կին և 23 տղամարդ): Ներկայացումները կը սկսվեն սեպտեմբերի 18-ին՝ Օստրօվսկիի ամենալաւ պիէսաներից մէկի բեմադրութեամբ: Այդ պիէսայի մէջ շօշափվում է գլխաւորաբար ժամանակակից սալօնական կեանքը: Երկրորդ ներկայացումը նուիրված կը լինի Հայրենական պատերազմի յօբելեանին և կը ներկայացվի յատուկ այդ յօբելեանի համար պատրաստված պիէսը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դիլիջան, 10 օգոստոսի

Թաւրիզի ձեր թղթակից Հայկազունն իմ առողջութիւնը իր մտահոգութեան նիւթ է դարձրել՝ հաղորդելով այդ մասին ոչ ճիշդ տեղեկութիւններ:

Այդ սխալ տեղեկութիւնները որովհետև կարող են անհանգստութիւն պատճառել ազգականներիս ու բարեկամներիս, ուստի թոյլ տուէք ձեր թերթի միջոցով յայտնել, որ ես ոչ միայն հիւանդ չեմ այժմ, այլև երբէք այնպէս առողջ չեմ եղել, ինչպէս եմ հիմա: Դրա համար կը վերադառնամ իմ պաշտօնիս:

Յօնան Դաւթեան

ԿՈՉ

Վան, 18 յուլիս

Պատ. հայրենակիցներ.

Ինչպէս յայտնի է, Հայկական Բարեգ. Ընդհ. Միութեան և Միացեալ Ընկերութեանց միացեալ ջանքերով Վանայ մէջ վարժապետանոց մը բանալու օգտակար ձեռնարկին հանդէպ և այդ հաստատութեան յարատեւութիւնը շարունակելու նպատակաւ ձեռնարկուած է այս տարի վարժապետանոցի յատուկ շէնքի մը կառուցման Վանայ մէջ, որ արդէն սկսուած է ու կը շարունակուի յատուկ գետնի մը վրայ:

Այդ գետնի գինը և շինութեան համար գնուած շինուածանիւթերու և ատաղձներու, ինչպէս նաև ցարդ եղած ընդհանուր ծախուց գումարը հասած է 54,700 ղրուշի. դեռ պէտք կայ 13,300 ղրուշ գումարի մըն ալ շէնքի արտաքին մասը (կարաւ-եափու) լրացնելու ու առաստաղը ծածկելու համար, իսկ 200 ոսկիի պէտք կայ առնուազն՝ շէնքի ներքին յարդարումները ու կահաւորումները լրացնելու, ինչպէս են պատուհաններու շրջանակ, երկաթ, ապակի, դուռ, յատակի ու առաստաղի տախտակամածները և այլն, համագումար մօտ 900 օսմ. ոսկի, որմէ տեղացի ազգայինք տուած են ցարդ 480, կամ յետագայ գումարներով միասին 500 օսմ. ոսկի, հայրենիքի տեղական զանազան հանգանակութեանց ու Բարեգործականի մուտք ու տարեկան անդամավճար մօտ 120 ոսկի ալ տալէն յետոյ:

Ուրեմն պակսած գումարի բաժինը կը մնայ մեր Կ. Պոլսոյ և արտասահմանի պանդուխտ հայրենակից ազգայիններուն, որոնք որչափ հայրենիքէն հեռու, բայց լիայոյս ենք, որ հայրենեաց այսպիսի անհրաժեշտ պէտքերուն համար գուրգուրացողներ են և չեն խնայեր իրենց բաժինը այսպիսի ամենակարեւոր կրթական ձեռնարկի մը ու լուսոյ վառարանի մը կառուցման համար:

Ուստի կոչ կընենք իւրաքանչիւր պանդուխտ վանեցիի հայրենասիրական և ուսումնասիրական զգացումներուն, յորդորելով որ թէ ի Կ. Պոլիս և թէ այլուրեք, յանձնաժողովներ կազմելով, դիմեն իւրաքանչիւր հայրենակցի նպաստին ու օգնութեան, և այս կերպով կատարուած հանգանակութեան արդիւնքը փութան ուղարկել մեզ, որպէսզի սկսուած շէնքը կարելի ըլլայ ամբողջացնել և յառաջիկայ տարեշրջանին հոն փոխադրել վարժապետանոցը, որ այժմ վարձու տան մէջ է: Թող իւրաքանչիւր հայրենասէր ազգային իրեն վանեցիի արժանապատւութեան խնդիր համարէ մասնակցիլ այս հանգանակութեան և չմոռնալ որ 900—1000 ոսկիի շինութեան ծախուց բեռ մը ծանրանայ միմիայն տեղացիներու ուսին վրայ, ճզմելով զանոնք իր ծանրութեան ներքև և կամ լքում առաջ գալով՝ շէնքը թերի մնայ, ինչ որ մեծ ամօթ պիտի ըլլայ վանեցիներու համար, քանի որ Բարեգործ. և Միացեալը վանեցւոց խօսքին վստահելով է որ յանձն առին բանալ վարժապետանոցը Վանայ մէջ, իսկ շինութեան ալ ձեռնարկուած է վստահելով ամեն վասպուրականցիի առատաձեռնութեան ու նըպաստին:

Առաջն. տեղապահ Վանայ՝
Յովսէփ եպիսկոպոս
Ներկայացուցիչ Հայոց Միացեալ Ընկերութեան և վերատեսուչ վարժապետանոցի շինութեան՝
Պ. Գափամաճեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Քաղաքական շրջաններում հաւատացնում են, որ արտաքին գործերի մինիստր Սազօնովի Լօնդօն գնալը կապ ունի եռապետական համաձայնութիւնը եռապետական դաշնակցութիւն դարձնելու ծրագրի հետ:

◆ Թիւրքական կաբինէտի հրաժարականը սպասվում է օրէ-ցոր. Քեամիլ փաշան համաձայն է կաբինէտ կազմել, երբ Իտալիայի հետ հաշտութիւն կը կայանայ:

◆ Թերթերին հեռագրում են Կ. Պոլսից, որ Քեամիլ փաշան պահանջում է հրաժարեցնել մեծ վէզիրին, սպառնալով հակառակ դէպքում ինքը հրաժարական տալ:

◆ Կ. Պոլսից հեռագրում են թերթերին, որ մինիստրների խորհուրդը լիազօրել է Լօնդօնի թիւրքական դեսպան Թէվֆիկ փաշային, Սօֆիայի դեսպան Նաբի բէյին և Ցէտինիէի նորերս նշանակված դեսպան Ֆահրէդդին-բէյին խաղաղութիւն կայացնելու մասին բանակցութիւն վարել Իտալիայի հետ. Այդ լիազօրները արդէն ուղևորվել են Պարիզ, ուր և տեղի կունենան բանակցութիւնները:

◆ Թիւրքաց կառավարութիւն կարգադրել է անմիջապէս կալանաւորել յայտնի Նիազի բէյին այն դէպքում, եթէ նա հակակառավարչական ագիտացիա մղելու լինի.

◆ Թէհրանում լուր է ստացվել, որ Սալար-ուդ-Դովլէն գտնվում է Արամօնում, Քիւրդիստանի սահմանի վրա, իր մի փոքրիկ խումբ համախոհներով: Նա գրաւել է մօտակայ մաքսատան եկամուտը:

◆ Բերլինի լրագիրները հաղորդում են, որ ապստամբութիւնը Մարօկկօյում Մարօկէշից անցել է Մակադոր: Ամեն տեղից լսվում են ընդհանուր ապստամբութեան կոչեր ֆրանսիացիներին արտաքսելու համար:

◆ Պեկինից հեռագրում են լրագիրներին, որ կառավարութիւնը միտինգներ է կազմակերպում, ուր զինւորներն ու ոստիկանները երդվում են հաւատարիմ մնալ կառավարութեանը և պահանջում են արձակել պալատը: Նոր պատգամաւորները պալատ են գնում ատրճանակներով զինված:

◆ Թէօդօսիայից ոչ հեռու գտնվող Կոնտեբելում բացվում է «Գրողների տնակ», յատկապէս գրողների հանգստեան համար:

◆ Մտադրութիւն կայ Մօզդօկում բանալ սեմինարիա:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
11, 12 և 13 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գրաւված է «Правда» լրագրի 88-րդ համարը «Նախընտրական ժողովներ» յօդուածը տպագրելու համար:

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ: Տիխօրէցկայա կայարանի մօտիկ, երեք չարագործներ գնացքի մէջ կողոպտեցին Պարամօնովի ֆիրմայի արտելշչիկին՝ տանելով նրա մօտ եղած 40,000 րուբլին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Առաւօտեան խոշոր հրդեհ ծագեց Նէվայի նաւաշինութեան և մեքենայական արհեստանոցում: Վնասը հասնում է 250,000 ր.: Բոլոր շինութիւնները ապահովագրված են զանազան ընկերութիւնների մէջ մի քանի միլիոնով:

ՎԵՐՆԻ: Ցեր. ժ. 1 և 25 րօպէին 5 վայրկեանչափ երկրաշարժ եղաւ, հասնելով մինչև 4 բալլի:

ՏԱՇՔԵՆԴ: Գիշերվայ ժամը 2 և 35 րօպէին ալիքանման երկրաշարժ պատահեց: Կախված իրերը օրօրվեցին:

ԲԷԼԳՐԱԴ: Թագաւորը մինիստրների և շքախմբի ուղեկցութեամբ վերադարձաւ կուրօրտից: Խօրվատիայի Սուբբօտիցի ոստիկանութիւնը, ինչ-ինչ անյայտ պատճառներից, ձիեր առնելու համար այստեղ եկած սերբիական յանձնաժողովին հարկադրել է հեռանալ քաղաքից:

ՄՕՍԿՎԱ: Բօրօդինեան դաշտում զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների, զօրքի և զեմստվային ներկայացուցիչների ներկայութեամբ տեղի է ունեցել 1812 թւի հերոս Նըվերօվսկիի արձանի բացումը, որի աճիւնը փոխադրված է Գերմանիայից: Նահանգապետը պսակ է դրել Թագաւոր Կայսրի կողմից:

ՏՕԿԻՕ: Մօդժիում և Նագասակիում եապօնական շոգենաւերի վրա խօլերային երկու դէպք է պատահել: Շոգենաւերը կարանտին են տարված:

ՀՌՈՄ: Տրիպօլիսից հեռագրում են «Տրիբունային», որ զինուորական օդաթռիչ Մանցինինին փորձնական արշաւանքի միջոցին իր մօնօպլանից ծովն ընկաւ և խեղդվեց:

ԱՐԴԱՀԱՆ: Շրջանի 60 գիւղերում սառնամանիքը ոչնչացրել է ցորենի և գարու ցանքսերը:

ՎԻԷՆՆԱ: Գերմանական ազգային միութիւնները Կամենսկիի անուան չեխական դպրոցների միութեան տօնի առիթով հակաչեխական ցոյցեր կազմակերպեցին: Ոստիկանութեան և չեխերի միջև պատահած ընդհարումի ժամանակ կատարվել են կալանաւորութիւններ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օդային նաւատորմի տօնը և հանգանակութիւնը ամենուրեք Ռուսաստանում նշանակվում է սեպտեմբերի երկրորդ կէսին:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Пиксафонъ
Уходъ за волосами дегтемъ
Цѣна флакона, хватающаго на нѣсколько мѣсяцевъ, 1 р. 50 коп.
На научномъ основаніи дѣйствительно лучшій способъ для укрѣпленія кожи головы и волосъ.
Пиксафонъ

(275202/275208) (կ.) 2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 Ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին ներվային:
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերքաւորութեան և միզասեռ. հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՈՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻՆԳԵՐ-ԱՐԵՇԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:
Ջ. Ա. ԹԱՌԻՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—80

Առեւտրակ. ուսումնարան
ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ, և
Հաշուապահական կուրսեր
ԻՎԱՆ Զ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան և լրացուց. քննութ. օգոստ. 27-ից: Պարապմունքները Առևտրականում սեպտ. 3-ից, իսկ Հաշւապահականում 15-ից: Միխայլովսկի պր. № 53.:
(հ.կ.) 594. 5—1

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ Բարօնսկայա փողոցի վրա գտնված դպրոցական հին շէնքը տրվում է վարձով: Նոյնպէս Գրաֆսկայա փողոցում երեք բնակարան, որոնցից 2-ը 7-ական սենեակից, իսկ 1-ը 4 սենեակից բաղկացած՝ ջրով ու լողարանով: Երկու խանութ Սոլլատսկի բազարում, 1 խանութ Պուշկինսկայա փողոցում և 3 խանութ Գրաֆսկայա փողոցում: Եօթն տեղ Փիրոյեանի շէնքի պասսաժում և 7 խանութ գաւթում: Ցանկացողները կարող են դիմել դպրոցիս կառավարիչ Գասպարեանին:
(ու. կ.) 592. 3—1

ԳԻՐ ԵՒ ԿԵԱՆՔ
ԿԱԶՄԵՑԻՆ
ՅՈՎ. ՄԱԼԽԱՍԵԱՆ ԵՒ ՆԱՐ-ԴՈՍ
Երես 624.
Գինն է 1 ր. 25 կոպ.
(Հ. Հ.)

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ
ՀԱԶԱՐՓԷՇԷՆ
լոյս տեսաւ. ՝ արժէ 8 կոպ.
100 հատը 6 ր. 50 կ. կանխիկ, ուղարկելը մեր ծախքով: Դիմել՝ Тифлисъ, Большая-Ванкская, № 30. Екатеринѣ Конст. Абовьянъ, նաև գրավաճառներին:
(Հ.) 590. 3—1

ՆԱԽԿԻՆ «ԺՕՐԺ»
Օրտոպեդիկ եւ բանդաժային արհեստանոց
Միխայլովսկի, № 59, Միքայէլեան հիւանդանոցի դիմացը:



Ամեն տեսակ օրտոպեդիկ կօրսէտներ և ապարատներ, արհեստական ձեռներ ու ոտներ, փորակապ բանդաժներ, նոյնպէս և տեղահան եղած երիկամունքների ու պորտի, յղիութեան, յետ-ծննդաբերութեան, աղիքների թուլացման և փորի պատռուածքների համար ամեն սիստեմի բանդաժներ՝ թէ զսպանակով (пружинъ) և թէ առանց զսպանակի:
Գ. Ս. Սանօրուսօվ
593. 1—1

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիսում (Նիկօլայէվսկայա փող. № 36, Վօրօնցովի արձանի մօտ):
Մանրամասն տեղեկութիւններ տրվում են կուրսերի դիւանատանը ամեն օր՝ երեկոյեան ժամը 4—7-ը:
(պ.օ.) 579. 25—3

ԹԻՖԼԻՍԻ I ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
VII ԴԱՍ. ՄԻ ԱՇԱԿԵՐՏ
Ընդունում է գիշերօթիկ աշակերտներ, թէ պարապելու և թէ պատրաստելու նրանց առևտր. դպրոցների համար: Պայմանների մասին դիմել՝ Թիֆլիս, Կուրնայա փող. № 4, բնակ. 7.
(Հ.) 582. 2—2

ԱՐԱԳ ԵՒ ԷԺԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ
բոլոր առարկ. միջն. դպր. համար
ՈՒՍԱՆՈՂ
Կօջօրսկայա 7, բն. Րօզէնբլատի
Մուտքը բակից: Անձամբ՝ ժ. 4—6-ը:
(ա. օ.) 580. 3—3

ԶԱՔԱԹԱԼԱՅԻ հայոց ծխ. երկս. դպրոցի համար հարկաւոր են՝ ներսիսեանաւարտ կամ ճեմարանաւարտ
խմբապետ-ուսուցիչ,
որ վարելու է եկեղեցու երգեցիկ խումբը և ունենալու 26 դաս, ռոճիկ դասերի համար 500 ր., խմբապետութեան՝ 90 ր., և
մի վարժուհի գիմնազիաւարտ, 26 դաս, 500 րուբլի:
Դիմել հոգաբարձութեանս:
Հոգ. նախագահ՝ Մ. Մելքումեան
(ա.օ.) 591. 4—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՄԵՐ ՈՒՂԻՆ"
(Ժողովածու, 160 մեծադիր էջ)
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—1) Դ. Անանուն. «Հայ տպագրութեան 400-ամեակի առիթով»: 2) Լ. Ալթաբէկեան. «Նեռվա»: 3) Արտաշէս Տիրացեան. «Թիւրքահայոց ազգ. սահմանադրութեան իրաւաբանական հիմունքները»: 4) Շ. Կուրղինեան. «Բանւորական թաղամասում»: 5) Հ. Հէյնէ. «Enfant perdu», թարգմ. Դ. Նորեկ: 6) Կարլ Կաուցկի. «Նոր լիբերալիզմ և նոր միջին դասակարգեր»: 7) Հ. Մազմանեան. «Դու կարկաչուն ես...»: 8) Ալ. Մարտունի. «Արդի տնտեսական կեանքը» (ա. «Կապիտալիզմը Ռուսաստանում», բ. «Ռուսական համայնքը», գ. «Խոշոր և մանր տնտեսութեան հարցը գիւղատնտեսութեան մէջ»): 9) Դ. Անանուն. «Մենութեան մղձաւանջը» (Վ. Տէրեանի մասին): 10) Կոզա. «Մետաքսագործութիւնը և մետաքսագործարանների բանւորները Ղարաբաղում»: 11) Դ. Տէր-Դանիէլեան. «Բանւորական օրէնսդրութիւն»: 12) Նոր գրքեր. ա) Օրմանեան. «Հայոց եկեղեցին», բ) Ա. Իսահակեան. «Աբու-լալա Մահարի», գ) Կարէն Միքայէլեան. «Ձմրան երեկոյ», դ) Յ. Յակոբեան. «Բանաստեղծութիւններ», ե) Յ. Սօլօվեան. «Քննադատական տեսութիւններ», զ) «Գեղարուեստ», 4-րդ գիրք: 13) Արտաշէս. «Հերման Գրէօյլիխ»: 14) Արսէն Կիտուր. «Թիւրքիայի կեանքից»: 15) Միք. Շամչեան. «1912 թ. պետական բիւջէն»: 16) Յայտարարութիւններ:
Գինն է Բագւում՝ 50 կ., ճանապարհածախսով՝ 60 կոպ.:
Դիմել՝ «Պօրեդնիկ» գրավաճառանոցին Բագւում, «Գիր» գրավաճառանոցին Թիֆլիսում:
(օ. մ.) 578. 3—2

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ
Հայոց ծխական դպրոցների բարձր դասարանների, Թեմական դպրոցների ստորին դասարանների և պետական միջնակարգ դպրոցների համար:
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին:
584. 6—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный